

ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍԸ

Առաջաբան

Ես գիտակցում եմ այս շարադրանքի կարևորությունը և գիտեմ, որ այն հետևանքներ կբողոքի: Բայց անհրաժեշտությունից ելնելով ինձ ուրիշ ընտրություն չի մնում, քան գրել այն, ինչ պետք է ասվի, եթե նույնիսկ պետք է գրել շատ համառոտ: Նա, ով ուզում է, կարող է քննել Սուրբ Գիրքը: Ինչպես միշտ՝ ոմանք կընդունեն, ոմանք կմերժեն: Կիլինեն մարդիկ, ովքեր սրտի խորքից կուրախանան, որ ինչ-որ մեկը քաջություն է ունեցել չարիքը արմատից բռնել և հնարավորության դեպքում այնտեղ կացին դնել: Մյուսները կբարկանան:

Միտումնավոր են խուսափել օգտագործելուց այն խոսքերը, որոնք դրկտոր Մարտին Լյութերն է օգտագործել իր գրվածքներում, որոնցում խոսել է հակաքրիստոսի մասին: Այն, ինչ նա գրել է այդ թեմայի վերաբերյալ, համապատասխանում է այս շարադրանքին: Այդ մասին կարելի է կարդալ նրա իին գրվածքներում, օրինակ Պանիել մարգարեի ընդարձակ առաջարանի մեջ: Այդ գրվածքները մեզ ցույց են տալիս, թե ինչպիսի խորությամբ էր Աստծո այդ մարդը կապված այն խոսքին, որը թարգմանում էր: Այդ տեսանկյունից եկեղեցու պատմության մեջ չկա մի մարդ, որ համեմատվի նրա հետ: Փրկության անձնական փորձառության հիման վրա նա վստահություն ուներ, որ մարդ արդարանում է Քրիստոսին հավատալով: Ավելին՝ նա ներքին և խորը հարաբերություն ուներ Աստծո և իր խոսքի հետ:

Ինչպես այն ժամանակ, երբ Աստված սկսեց Ռեֆորմացիան, զորավոր կերպով պայքարեց խավարի թագավորության դեմ, այնպես էլ հիմա է գործում իր եկեղեցու կատարելության ժամանակ, որը դուրս է եկել Ռեֆորմացիայից և միշտ նոր հոգևոր արքնություններ է ապրում և շարժվում առաջ: Նա, ով ուսումնասիրել է եկեղեցու պատմությունը, գիտի, թե ինչպես տարբեր ժամանակաշրջաններում աստվածածնչն չանչ անչանչ է որոշ ճշմարտություններ նորից դրվել են աշտանակի վրա: Այժմ բոլոր ճշմարտությունները պետք է քարոզվեն որպես լիակատար Ավետարան, որպեսզի բոլոր անջատ վարդապետությունները հավաքվեն և կազմեն ամբողջություն:

Որպես միսիոներ, որը 1964 թվականից ճանապարհորդել է 90-ից ավելի երկրներուն և քարոզել գրեթե բոլոր հարանվանությունների վեհաժողովներում, ես հարգանքով եմ վերաբերում բոլոր հավատացյալներին և կրոններին: Իմ ելույթներին մասնակցել են բոլոր ռասաներին և աշխարհայացքներին պատկանող մարդիկ: Հարավային Աֆրիկայում որպես բողոքականի, ինձ հնարավորություն տրվեց քարոզելու նույնիսկ կաթոլիկ եկեղեցում, որտեղ հազարից ավելի մարդիկ կային: Քանի որ խորապես կարեկցում եմ իմ մերձավորին, պետք է քողազերծեն երկրի վրա գոյություն ունեցող մեծագույն կրոնական մոլորությունները: Ամեն մարդ իրավունք ունի ճանաչելու ճշմարտությունը:

Մենք չենք ապրում այնպիսի ժամանակաշրջանում, երբ միայն քաղաքաետը, քահանան և ուսուցիչը կարդալ գիտեին, ոչ էլ մոտ նեկ հազարամյակ տևած ժամանակաշրջանում, երբ Եկեղեցին հսկում էր, որ Աստվածաշունչը չհայտնվի ժողովրդի ձեռքում: Այլ մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամեն մարդ կարող է տեղեկանալ ամեն ինչից: Ուրեմն ինչու՞ սրա վերաբերյալ էլ հետազոտություն չանենք: Այս կարծ շարադրանքի մեջ կարող ենք միայն թերևակի շոշափել հիմնական հարցերը:

Խոսքն անձամբ յուրաքանչյուրիս նասին է և այն նասին, թե ինչ է մեզ սպասվում մահից հետո: Իրականում մարդը ստեղծված է կյանքի համար, որովհետև ստույգ է, որ մահից հետո կյանքը շարունակվում է, թեև շատերը չեն ուզում ընդունել այդ: Մինչդեռ յուրաքանչյուրը պետք է սլաքները դնի իրենց ծիշտ տեղերում, եթե ուզում է հասնել նպատակին:

Բազմաթիվ աստվածաշնչային թարգմանություններից ընտրել եմ դոկտոր Յերման Մենգեի թարգմանությունը:

Թող այս գրքույկը օրինություն լինի բոլոր ընթերցողների համար, և շատերը, որոնք գնում էին կորստի տաճող լայն ճանապարհով թող բերվեն նեղ ճանապարհի վրա, որը տաճում է հավիտենական կյանքին: Թող յուրաքանչյուրը ճանաչի ճշնարտությունը, թող այդ ճշնարտությունը թափանցի ամենքի մեջ և ազատի բոլոր մոլորություններից: Մեր փրկության գործը չենք կարող վստահել ոչ մի մարդու, այլ միայն Աստծուն:

Կրեֆելդ, հուլիս 1986
Յեղինակ

ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍԸ

Աստվածաշնչյան շարադրանք

Ներածություն

Այս շարադրանքում հիմնականում կվկայակոչենք Դանիել մարգարեի և Յայտնության գրքերը: Մինչև Վերջերս նոյնիսկ միշազգային ճանաչում ունեցող Աստվածաշնչի վարդապետները չեն կարող իսկապես հասկանալ այս երկու մարգարեական գրքերի բովանդակությունը: Նրանք անվերջ նորանոր առեղջվածների էին հանդիպում, որովհետև չեն կարող հասկանալ այդ գրքերում օգտագործված խորհրդանշական լեզուն: Այն, ինչ գրվել է Սուրբ Հոգուց ուղղակի ներշնչնամբ, կարող է բացահայտվել և հասկացվել միայն առանձնահատուկ երկնային հայտնությամբ: Այս տեսանկյունից ոչ մի մարդկային, փիլիսոփայական հոգի չի կարող քննել այդ բաները. պետք է Աստծո Հոգին լուսավորի և բացահայտի այն, ինչ քարնված է (2 Կորնթ.2:10-13): Քամի որ մարգարեական մասի համար ժամանակը դեռ չեր եկել, մարդիկ պարզապես գրել են իրենց սեփական գիտության և հասկացողության համաձայն:

Աստվածաշնչյան մարգարեությունը չի կարող մեկնաբանվել: Այն պետք է ճանաչել և դիտել իր իրագործման մեջ: Վախճանաբանական իրադարձությունները, այսինքն՝ վերջին ժամանակների իրադարձությունները նախօրոք ծրագրավորվել են աստվածային նախասահմանությամբ: Աստված նախօրոք երկու բան էր գրել. մարդկության պատմությունը և փրկության պատմությունը, որը իրականանում է մարդկության մեջ: Ինչպես կտեսնենք, այն, ինչ Աստվածաշնչի մեկնաբաններն ասել են մինչև այսօր, չի համապատասխանում Աստծո հստակ պատասխանների հետ: Եթե մեկը կարծում է, թե ինչ-ող բան գիտի, թող մտածի, որ ամեն գիտություն հիմնված է Սուրբ Գրքի միասնական վկայության վրա և պետք է ներդաշնակ լինի ողջ Սուրբ Գրքի հետ: Այն, ինչ ասվում է որևէ թեմայի վերաբերյալ, ճիշտ է միայն այն դեպքում, եթե այդ թեմային վերաբերող վերջին հարցերն ել հստակ, գոհացուցիչ և միանշանակ պատասխան ստանան:

Եթե Տերը իրեն պատկանողներին Սուրբ Գրքի մարգարեական մասը հասկանալու կարողություն է տվել, պատճառն այն չէ, որ մենք ավելի խորությամբ ենք սերտել Աստվածաշնչը, այլ որովհետև հիմա եկել է այն ժամանակը, երբ Աստծո խորհուրդները հայտնի են դառնում: Առանց որևէ կասկածի, մենք ապրում ենք փրկության պատմության վերջին ժամանակաշրջանում: Այս պնդումն անում եմ ոչ թե խուճապ առաջացնելու և աշխարհի վերջի մընոլորտ ստեղծելու համար, այլ նրա համար, որ մարդիկ արթնանան և զգաստանան: Այժմ պետք է շեշտել մարգարեական Խոսքը, որը չպետք է հետ մնա ավետարանչությունից և վարդապետությունից: Դանիել մարգարեի գրքի 12-րդ գլուխ 4-րդ համարում հրեշտակը պատվիրեց Դանիելին. «Դուն ո՞վ Դանիել, այս խօսքերը գոցէ ու

գիրքը կնքէ մինչեւ վերջին ժամանակը: Շատերը ուշադրութեամբ պիտի կարդան ու գիտուրիւնը պիտի շատնայ»:

Այս գրքի այնքան կարևոր բռվանդակության կնքումը չպետք է մնար հավիտյան, այլ միայն մինչև վերջին ժամանակը: «Վերջին ժամանակների» կամ «Վերջին օրերի» մասին խոսում են թե՛ Յիսուս, թե՛ Նոր կտակարանները: Դաճիելի 8:17, 19 համարներում ասվում է. «Յասկցի՛ր, որդի մարդոյ, որ այս տեսիլքը վերջին ժամանակի համար է... Ահա թեզ կ'իմացնեն բարկութեան վերջը ըլլալիքը, վասն զի այս տեսիլը վերջին ժամանակի համար է»:

Այն, ինչ դեռևս վերջերս բաքնված և կնքված էր, և այդ պատճառով չէր կարող հասկացվել, այժմ բացահայտված է: Անշուշտ, այս շարադրանքը կարդալուց հետո Դանիել մարգարեի և Յայտնության գրքերը ավելի հասկանալի կլինեն բոլորի համար:

Դանիել մարգարեի տեսած տեսիլքը, որում որոշ զարգացումներ և իրադարձություններ տրվեցին խորհրդապատկերների միջոցով, չնեկաբանվեց իր կողմից, այլ ուղարկվեց Գաբրիել հրեշտակը՝ Նրան տեսածը բացատրելու համար: Դանիելն այդ մասին վկայում է 9-րդ գլխի 22 և 23 համարներում. «Ու ինձի հետ խօսեցաւ ու ըսաւ. «Ո՛վ Դանիել, հիմա եկայ որ քեզի իմաստութիւն պարգեւեմ: Քու աղաչանքիդ սկզբը պատգամ տրուեցաւ ու ես եկայ որպէս զի պատմեմ, վասն զի դում Աստուծոյ սիրելին ես: Ուրեմն պատգամը միտքը պահէ ու տեսիլքը հասկցիր»:

Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա պետք է ստանալ ճիշտ լուսաբանում և հասկացողություն. բայց դա նաև իր աղոթքի արդյունքն էր, որում նա արտահայտում էր իր սրտի խոր փափագը՝ լուսավորում ստանալ Աստծուց: Սրա վերաբերյալ հասկացողության բանալին գտնվում է հրեշտակի պատվերի մեջ. «Ուրեմն պատգամը միտքը պահէ ու տեսիլքը հասկցիր» (Դան.9:23): Նա, ով խոսքին ուշադրություն չի դարձնում, չնայած կարծեցյալ հայտնությանը՝ կմոլորվի: Աստված կապված է իր խոսքի հետ: Նա ամեն բան կատարում է իր խոսքի համաձայն: Դանիել 10:21 համարում կարդում ենք. «Բայց ես ճշմարտութեան գրքին մեջ գրուածը քեզի պիտի պատմեմ»: Մենք կարիք չունենք իմանալու ավելին, ոչ էլ ուզում ենք ավելին իմանալ: Բայց ուզում ենք ապրել այն, ինչ գրված է այդ ճշմարտության գրում:

Յովհաննեսին նույնպես այցելեց հրեշտակը, երբ նա գտնվում էր Պատմոս կղզում: Այդ մասին վկայված է Յայտնության գրքի առաջին գլխի առաջին համարում. «Յիսուս Քրիստոսի հայտնությունը, որ Աստված տվեց Նրան՝ իր ծառաներին ցույց տալու, ինչ որ շուտով պետք է լինի, և իմացրեց իր հրեշտակի միջոցով՝ ուղարկելով իր Յովհաննես ծառային»: Բոլոր տեսիլքները և խորհրդանշական իրադարձությունները տեսնելուց հետո նա անում է հետևյալ վկայությունը 22:8,9 համարներում. «Եվ ես՝ Յովհաննեսս, այս բաները լսողն ու տեսնողը, երբ լսեցի ու տեսա, ընկա, որ երկրպագեն այն հրեշտակի ոտքերի առաջ, որ այս բաները ցույց էր տալիս ինձ: Եվ նա ինձ ասաց. «Զգուշացիր, մի արա այս, որովհետև ես ծառայակից եմ քեզ, քո

Եղբայր մարգարեներին և այս գոքի մարգարեության խոսքերը պահողներին. Աստծուն երկրպագիր»:

Գոհությունն ու պաշտամունքը պատկանում են միայն Աստծուն, երբ նոյնիսկ Նա հրեշտակ կամ պատգամաբեր է ուղարկում: Նա ունի երկնային և երկրային պատգամաբերներ, որոնց միջոցով Նա խոսում է և գործում (Եր.1:7):

Փրկության պատմության հետ կապված առանձնահատուկ առաջադրանքին համապատասխանում է ուղղակի մարգարեական, առաքելական կոչում: Նա, ով միայն երևակայում է, թե ուղարկված է, մարդկանց կկապի իր հետ և իր սեփական վարդապետության և նրանց կղարձնի իր աշակերտները: Բայց նա, ով ուղարկված է Աստծո կողմից, Աստծո խոսքն է խոսում և մարդկանց կապում է Աստծո հետ:

Աստծո այդ մարդիկ հարթում և պատրաստում են Աստծո և իր ժողովորի ճանապարհը, որպեսզի մարդիկ ազատ լինեն բոլոր խոչընդոտներից (Ես. 62:10): Այդպես են մարդիկ դառնում Քրիստոսի իսկական աշակերտները և նմանվում են Նրան:

Այս միտքը մեզ հիշեցնում է Մաղաք.3:1-ում գրված մարգարեությունը. «Ահա Ես Իմ դեսպանն կը դրկեմ, որ Իմ առջեւս ճանքայ պատրաստէ...»: Այս մարգարեությունը կատարվեց Յովիհաննես Մկրտչի ծառայության միջոցով, որին Տերը ուղարկել էր իր առջևից (Մատթ.11:10):

Հայտն.22:6 համարում կարդում ենք. «Այս խոսքերը հավաստի ու ճշմարիտ են: Ու Տերը՝ սուրբ մարգարեների հոգիների Աստվածը, ուղարկեց իր հրեշտակին, որ իր ծառաներին ցույց տա այն, ինչ շուտով պիտի լինի»: Վերջապես Տերն ինքն է ասում 16-րդ համարում. «Ես՝ Յիսուս, Իմ հրեշտակին ուղարկեցի, որ ձեզ վկայի այս բաները Եկեղեցիների մեջ»:

Երբ կատարվում են փրկության պատմության հետ կապված իրադարձությունները, Աստված միշտ հրեշտակ կամ մարգարե է ուղարկում. «Յիրաւի Տէր Եհովան բան մը չըներ, մինչեւ որ իր գաղտնիքը իր ծառաներուն՝ մարգարեներուն շայտնէ» (Ամուս 3:7): Օրինակ՝ հրեշտակի միջոցով ազդարարվեց Յովիհաննես Մկրտչի ծնունդը (Ղուկ.1:13): Բեթլեհեմի դաշտերում հովհվները լսեցին երկնային գորքերի երգը և հրեշտակից լսեցին Փրկչի ծննդյան լուրը. «Մի Վախեցէր, որովհետեւ ահա ձեզ մեծ ուրախություն են ավետում, որ ամբողջ ժողովորդին է լինելու. այսօր ձեզ Դավիթի քաղաքում Փրկիչ ծնվեց, որ է Օծյալ Տերը» (Ղուկաս 2:11): Կնիքների բացումը նոյնպես ազդարարվեց գերբնական ձևով:

ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՅԱԿԱՔՐԻՍՏՈՍԸ

Յակաքրիստոսի մասին այս կարևոր թեմայի վերաբերյալ հստակություն ստանալու համար պետք է առանց կանխակալ կարծիքի դիմենք Աստծո խոսքին, որպեսզի Սուրբ Գրքի հիման վրա ճանաչնք այդ խորհրդավոր անձնավորությանը: Ինչպես արդեն նշեցինք՝ մարդկային կարծիքները

վաղուց գոյություն ունեն և խիստ տարբերվում են իրարից: Բայց մենք իրավունք ունենք իմանալու ճիշտ և անհերքելի պատասխանը: Իսկ այդ ճիշտ պատասխանը մեզ կտրվի միայն Աստծո անսխալական խոսքի միջոցով:

Սուլրգորային բոլոր վկայությունները առանձին և իրար հետ կապված ապացուցում են Աստծո ծշմարտացիությունը: Արարչագործությունը վկայում է իր Արարչի մասին: Նա, ով ժխտում է Արարչի գոյությունը, պետք է ժխտի նաև տիեզերքի մեծության գոյությունը: Փրկվածները կենդանի ապացույցն են այն բանի, որ Փրկիչ կա: Աստվածային բաները կարիք չունեն նարդկանց կողմից ապացուցվելու: Դրանք իրականանում են և ապացուցում իրենց ծշմարտացիությունը: Սա վերաբերում է յուրաքանչյուր թեմային և Սուլր Գրքի բոլոր ոլորտներին:

Հակաքրիստոսի վերաբերյալ այս բարդ թեման կրոնական ասպարեզում գոյություն ունեցող ամենադժվար թեմաներից մեկն է: Առաջինը՝ Յիսուս Քրիստոսի խորհրդավոր աստվածությունն է, երկրորդը՝ հակաքրիստոսի առեղջվածային անձնավորությունը: Մարդկանց մեծամասնության համար թե՛ մեկը, թե՛ մյուսը առեղջված են: Այս երկու դեպքերում նարդկային կարծիքները իրարից շատ են տարբերվում: Երկրի վրա չկա ոչ մի ուսումնական հաստատություն, ոչ մի այրոֆեսոր, որ կարողանա այս թեմայի վերաբերյալ հավաստի պարզաբանումներ տալ: Ավանդական աստվածաբանությունը կատարյալ մոլորության մեջ է: Այն միայն պարունակում է մեկնություններ, որոնք համապատասխանում են տարբեր եկեղեցիների կողմնորոշումներին:

Ինչպես արդեն մեջբերեցինք Դանիել մարգարեի գրքից՝ այս խորհրդավոր գիրքը պետք է փակված և կնքված լիներ մինչև Վերջին ժամանակները: Յայտն.5:1 համարից իմանում ենք, որ Նոր Կտակարանում կնքված գիրք կա: Տիրեց այս հարցը. «Ո՞վ է արժանի այս գիրքը բացելու ու նրա կնիքները քանդելու» (հ. 5): Յովիաննեսը, որ դիտում էր իրադարձությունները, ստացավ այս պատասխանը. «Ահա հաղթեց առյուծը, որ Յուդայի ցեղից է՝ Դավթի արմատը, որպեսզի գիրքը բաց անի ու նրա յոթ կնիքները քանդի» (հ. 5):

Այս շարադրանքում չենք կարող խոսել Կնիքների բացման և դրա անքան կարևոր նշանակության մասին, ոչ էլ մանրամասն շարադրել դրանց բուվանդակությունը: Այստեղ կխոսենք վերոհիշյալ թեմայի և դրան պատկանող խորհրդապատկերների մասին, որոնց նորից ու նորից հանդիպում ենք: Մարգարեության մեջ, ինչպես նաև Տիրոջ առակներում գործ ունենք խորհրդապատկերների հետ, որոնցում բաքնված է իսկական իմաստը: Այստեղ խոսվում է գաղանների, եղջյուրների, գաղանի պատկերի, դրոշմի, համարի, նույնիսկ գաղանի վրա նստած պոռնիկի մասին և այլն: Սուլր Գրքի օգնությամբ մանրամասն կքննարկենք այդ խորհրդապատկերների նշանակությունը:

Հակաքրիստոսի համակարգը բազմակողմանի և մոտ երկու հազար տարի գոյություն ունեցող փրկության պատմության հետ գուգահեռ

է քայլում: Սուրբ Գիրքը նրան ցույց է տալիս տարբեր կողմերից: Պողոսը նրան տարբեր տիտղոսներով է կոչում: Մարգարեական հեռատեսությամբ նա կարողացավ ճշգրիտ կերպով նկարագրել նրան: Առաջքալը մեզ հորդորում է այս խոսքերով. «Սեկը ձեզ ոչ մի կերպ թող չխարի, որովհետև այն օրը չի գա, եթե նախ ապստամբությունը չգա, ու չհայտնվի անօրենության մարդոք՝ կորստյան որդին, այն հակառակորդը, որ գոռողացած է բոլորի նկատմամբ, որն Աստված կամ Աստծո պաշտոնյա է անվանվում. մինչև որ նա տաճարում (իբրև Աստված) նստի և ինքն իրեն ցույց տա, որ Աստված է: Չե՞ք հիշում, որ երբ դեռ ձեզ մոտ էի, այս բաներն ասում էի ձեզ: Եվ հիմա գիտեք այն, որ արգելում է, որ նա իր ժամանակին հայտնվի: Որովհետև անօրենության խորհուրդն արդեն գորանում է, միայն թե չափուի կատարվի մինչև որ մեջտեղից վերացվի այժմ արգելողը: Եվ այդ ժամանակ կհայտնվի այն անօրենը, որին Տեր Յիսուսն իր բերանի հոգով կսպանի ու իր գալստյան հայտնությամբ կկործանի: Նրա գալը սատանայի ներգործությունից է ամեն գորությամբ, սուտ նշաններով ու հրաշքներով և կորուսյալների մեջ անիրավության բոլոր խարերայություններով՝ փոխանակ նրա, որ ճշմարտության սերը չընդունեցին, որպեսզի փրկվեն» (2 Թես. 2:3-10):

Յետևալ համեմատությունները մեզ կտան հակաքրիստոսի մի քանի նշանները և մեզ կօգնեն ավելի լավ զանազանելու նրան.

Քրիստոսը եկավ Յոր Անունով (Հովհ.5:43):

Նմանակողը գալիս է իր սեփական անունով (Հովհ.5:43թ):

Քրիստոսը մինչև մահ խոնարիվեց (Փիլիպ.2:8):

Կորստյան որդին գոռողացած է բոլորի նկատմամբ (2 Թես. 2:4):

Քրիստոսը արհամարիվեց և լրվեց մարդկանցից (Ես.53:3):

Յակաքրիստոսը պաշտվում և պատիվ է ստանում մարդկանցից (Յայտն. 13:8):

Քրիստոսը Աստծո ճշմարիտ Մարգարեն է (2 Օրին.18:15-18, Գործք. 3:22,23):

Յակաքրիստոսը սուտ մարգարեն է (Յայտն.16:13, 20:10):

Քրիստոսը վկայում է ճշմարտության մասին (Հովհ.18:37):

Անօրենը ճշմարտությունը գետնին է զարկում (Ղան.8:12):

Քրիստոսը եկավ Աստծո կամքը կատարելու (Եբր.10:7-10):

Յակաքրիստոսը կատարում է իր կամքը (Ղան.11:36):

Քրիստոսը եկավ, որ փնտրի և գտնի կորածին (Ղուկ.19:10)

Յակաքրիստոսը Ելնում է կործանելու սրբերի ժողովրդին (Ղան.8:24):

Քրիստոսը հնազանդ էր Աստծո օրենքին (Մատթ.5:17):

Անօրենն առանց օրենքի է (2 Թես.2:8, Ղան.2:25ա):

Քրիստոսը կոչվեց Աստծո Որդի (Ղուկ.1:35):

Յակաքրիստոսը կոչվեց անօրենության մարդ (2 Թես.2:3):

Քրիստոսը աստվածապաշտության խորհուրդն է (1 Տիմ.3:16):

Յակաքրիստոսը անօրենության խորհուրդն է (2 Թես.2:7):

Այս համեմատությունները, որոնք ցանկության դեպքում կարելի է շարունակել, անհրաժեշտ են, որպեսզի կարողանանք պատկերացնել, թե ինչպիսին է այդ անձնավորությունը: Մեր շարադրանքում հասկանալի կղառնան այն հակադրությունները, որոնք մինչև հիմա անհասկանալի են եղել շատերի համար: Դանիել մարգարեի գրքում, առաջալների թղթերում և Յայտնության գրքում կհանդիպենք տարբեր անվանումների, որոնք սակայն նկարագրում են նույն անձնավորությանը և նույն բազմակողմանի համակարգը:

ԾԱԳՈՒՄԸ

Այնպես, ինչպես Քրիստոսին որպես ճշնարիտ Աստծո կարելի է ճանաչել միայն Երկնքից ստացած լուսավորմամբ: Ինչպես Քրիստոսը Աստծո հայտնությունն է մարդկային մարմնի մեջ, այնպես էլ հակաքրիստոսը իր ուղղակիորեն հայտնվելու ժամանակ կլինի սատանայի անձնական հայտնությունը մարդկային մարմնում: Անկասկած, սատանան աթեխստ չէ. նա հավատում է Աստծուն և դողում է (Ղակ.2:19): Երկրի վրա նրա ներկայացուցիչը ամեն ինչում հետևում է նրա հետքերին: Արտաքինից գործ ունենք շատ բարեպաշտ մարդու հետ, որը նույնիսկ օգտագործում է սուլրգորային հատվածներ, ինչպես սատանան այդ արեց Յիսուսին փորձելու ժամանակ:

Թե՛ Քրիստոսը, թե՛ հակաքրիստոսը Երկար նախապատմություն ունեն: Երկուսի ծագումն էլ Երկնքից է: Եթե գնանք նրանց ծագման հետքերով, հեշտությամբ կարող ենք տեսնել, որ Քրիստոսը գալիս է Աստծուց, իսկ հակաքրիստոսը՝ սատանայից: Քրիստոսը ներկայացնում է Աստծո թագավորությունը՝ Լույսով և Կյանքով: Յակաքրիստոսը ներկայացնում է սատանայի թագավորությունը՝ խավարով և մահով: Երկուսն էլ գործում են Երկրի վրա, Երկուսն էլ միաժամանակ և՝ ծածկված են, և՝ բացահայտված:

Ինչպես արդեն նկատեցի՞ Սուրբ Գրքում ենք Երկուսի ճշգրիտ նկարագրությունը: Ժամանակների սկզբից ի վեր թե՛ Քրիստոսի, թե՛

հակաքրիստոսի մասին հաղորդվել և պատճվել է ստվերներով ու խորհրդապատկերներով: Երկուսն էլ թագավորություն են ներկայացնում: Երկուսն էլ գահի հավակնորդներ են, միայն թե նրանցից մեկն Աստված է, իսկ մյուսը ուզում է, որ իրեն Աստծոն տեղ երկրպագեն: Լույսն ու խավարը, որն ու գիշերը, կյանքը և մահը սկզբից ի վեր վկայում են լիովին տարբեր երկու եակների և ոլորտների մասին: Մենք տեսնում ենք, որ այս երկու ճյուղերը սկսվեցին Կայենով և Աբելով, իետո շարունակվեցին Հիսուսով և Յուդայով և, վերջապես, հասան Քրիստոսին և հակաքրիստոսին:

Քրիստոսը նկարագրված է տարբեր անվանումներով, որոնք ամեն անգամ կապված են իր տարբեր առաջադրանքների հետ՝ Աստծոն Որդի, մարդու Որդի, Դափի Որդի, Աստծոն Գառ, Միջնորդ, Բարեխոս, Թագավոր, Քահանայապետ, Մարդարե և այսպես շարունակ:

Ինչպես արդեն նշեցինք՝ հակաքրիստոսը կոչվում է տարբեր տիտղոսներով, որոնք ամեն անգամ կապված են իր էության հետ, ինչպես, օրինակ՝ «սուտ մարդարե», «անօրեն» (նա, որ առանց օրենքի է), «հակառակորդ» և այսպես շարունակ: Սուրբ Գիրքը լավ իմացողի համար դժվար չէ տեսնել, որ Աստծոն բոլոր հատկությունները հարյուր տոկոսով համապատասխանում են Քրիստոսի հետ, իսկ սատանայի հատկությունները գտնվում են հակաքրիստոսի մեջ:

ANTI – ՀԱԿԱ

Այդ առեղծվածային անձնավորության հետքերը գտնելու համար լավ հասկանալու բանալին «անտի» (գերմաներենում և մի շարք լեզուներում՝ «Antichrist». ծան. թարգմ.) բառն է: Ինչպես բոլորը գիտեն՝ «անտի» նշանակում է «հակա»: Ուրեմն, հակաքրիստոսը Քրիստոսի հակառակորդն է: Բայց այս անձնավորության բերած մոլորությունը սրանում է՝ նա վկայակոչում է Քրիստոսին: Չնայած դրան՝ նրա բոլոր վարդապետությունները և գործերը հակառակ են Քրիստոսին և Նրա խոսքին: Նա խոսում է Քրիստոսի մասին, բայց իր հետ է կապում իր հետևողություններին, որոնց (իր տեսանկյունից) նա կոչում է «հավատացյալներ»: Սրանք հավատում են իր խոսքին, ոչ թե Քրիստոսի:

Հակաքրիստոսին ճանաչելու առանձնահատուկ նշանն այն է, որ նա «ստախոս» է և նույնանում է իր վարդապետության հետ, որը բացառապես բաղկացած է ստերից, ի հակադրություն Քրիստոսի, Ով ճշմարտությունն է և Ուն վարդապետությունները կատարելապես ճշմարիտ են: Հակաքրիստոսը Քրիստոսի յուրաքանչյուր վարդապետություն փոխարինում է իր վարդապետություններով: Սուտը աղավաղված ճշմարտությունն է: Ինչպես սատանան Եղեմի պարտեզում օգտագործեց Աստծոն Խոսքը, այնպես էլ հակաքրիստոսն է նենգությամբ և խորանանկությամբ օգտագործում Աստծոն Խոսքը՝ ամենակրոնական ձևով կրոնավոր մարդկանց խաբելու համար: Մինչդեռ մանրամասն քննելուց հետո տեսնում ենք, որ իր սովորեցրածից

բացարձակապես ոչինչ չի համապատասխանում սկզբնական խոսքին: Նա, ով խոսում և գործում է խոսքին հակառակ, Քրիստոսին է հակառակվում, այսինքն՝ նա «հակաքրիստոս» է, որովհետև Քրիստոսը խօսքը է, ԼՈԳՈՍ:

Հակաքրիստոսի մասին լսում ենք արդեն սկզբնական քրիստոնեության մեջ: Յովհաննեսը բազմիցս նրան հիշատակում է իր թթերում: Մեր ժամանակների համար նրա մասին գրված է. «Որդյակնե՛ր, վերջին ժամանակն է, և ինչպես լսեցիք, որ Նեռը (հակաքրիստոսը) գալիս է...»: Ուշագրավ է, որ Յովհաննեսը մի կողմից խոսում է ների՝ հակաքրիստոսի, գալու մասին եզակի թվով, և դա վերաբերում է վերջին օրերին, այսինքն՝ վերջին ժամանակներին, բայց միաժամանակ խոսում է բազմաթիվ ներերի մասին, որոնք արդեն հայտնվել են. «...և այժմ շատ ներեր են դուրս եկել...» (1 Յովհ.2:18): Այստեղ չի խոսվում այն մարդկանց մասին, ովքեր մերժում են Քրիստոսին, այլ նրանց մասին, ովքեր Նրան ներկայացնում և բացատրում են խոսքին հակառակ ձևով:

Սուտ եղբայրները, որոնց մասին գրել է Պողոսը, սուտ «քրիստոները», որոնց մասին խոսել է Յիսուսը, սուտ օճյալներ են, որոնք հենց սկզբից հեռացել են մարդաբեների և առաքյալների խոսքից և շարադրել ուրիշ վարդապետական մտքեր: Աստվածաշունչը առանձնապես հիշատակում է Սիկողայոս անունով մի ճարտախոսի: Նրա հետևորդները կոչվեցին «նիկողայոսյաններ»: Նա իր շուրջը հավաքեց հավատացյալներին և քարոզեց գործերով փրկությունը, միայն հավատքով փրկությունը քարոզելու փոխարեն: Տերը գովում է Իրեններին առաջին նամակում, որն ուղղված էր Եփեսոսի եկեղեցու հրետակին. «Բայց այս բան ունես, որ նիկողայոսյանների գործերն ատում ես, որոնք ես էլ եմ ատում» (Յայտն.2:6): Եկեղեցիններին ուղղված երրորդ նամակում այս ոչ սուրբգրային ուղղությունը, որով ինքնակոչ հոգևորականությունը ղեկավարում էր աշխարհականներին, արդեն հաստատվել էր: Ահա թե ինչու գրված է այս նախազգուշացումը «Այդպես դու էլ նիկողայոսյանների վարդապետությունը պահողներ ունես, որ ես ատում եմ» (Յայտն. 2:15): Ինչպես ցորենն ու մոլախոտը միասին աճում են նոյն դաշտում, այնպես էլ քրիստոնեության ոլորտում միասին են գտնվում ծշմարիտ և սուտ հավատացյալները:

Դա սկսվեց այն ժամանակ, երբ հակաքրիստոսի հոգինների ազդեցության տակ քարոզեցին և հավատացին նշանակած գատված ուսմունքներին: Յետագյում հակաքրիստոսի համակարգում այդ ուսմունքները դոգմա դարձրին: Իսկ այդ ամենի քագարումը կիրականան հակաքրիստոսի մեջ: Պողոսը, որն ուներ մարդաբեական հեռատեսություն, գրել է. «Իսկ եթե մեկն ուրիշ տեսակ բան ստվորեցնի և մեր Տեր Յիսուս Քրիստոսի ողջամիտ խոսքերին ականջ չդնի՝ աստվածապահության համեմատ վարդապետությանը, նա գոռոզացած է ոչինչ չիմանալով...» (1 Տիմ. 6:3,4)

Առաքյալը գիտեր, որ իր քարոզածը աստվածային ծագում ուներ, որովհետև նա այն ստացել էր Յիսուս Քրիստոսի անմիջական հայտնությամբ (Գաղատ.1:12): Նա չէր պաշտպանում ինքն իրեն, ոչ էլ իր

վարդապետությունը, այլ Հիսուս Քրիստոսի Ավետարանը, որն Աստծոն փրկության սուրբ և սրբարար պատգամն է: 2 Տիմ.1:13, 14 համարներում նա պատվիրում է իր գործակիցներին հաստատուն կերպով կառչել ողջամիտ վարդապետությունից: «Ողջամիտ խոսքերի օրինակն ունեցի՞ր, որ ինձանից լսեցիր հավասով ու սիրով, որ Քրիստոս Հիսուսով է: Այն բարի ավանդը պահի՞ր Սուրբ Հոգով, որ մեր մեջ է բնակվում»):

Եկեղեցու պատմության ընթացքում շատ սուստ վարդապետներ և սուստ մարգարեններ են հայտնվել, ինչպես այդ մասին գրված է 2 Պետր.2:1 համարում. «Եվ այն ժողովորի մեջ սուստ մարգարեններ էլ կային, ինչպես ծեր մեջ էլ սուստ ուսուցիչներ պիտի լինեն, որ կորստական հերձվածողություններ ներս կրերեն և ուրանալով այն Տիրոջը, որ իրենց զնեց, իրենց վրա վաղահաս կորուստ կրերեն»: «Սուստ վարդապետներ» բառը նույնական հոգնակի թվով է գրված:

Հակաքրիստոսի հոգուց ներշնչված մի եկեղեցի աճեց ճշմարիտ Եկեղեցու կողքին: Իրենց վարդապետ կոչող մարդիկ՝ սուստ վարդապետները, կեղծ առաջքալերը, չին քարոզում Քրիստոսի ուսմունքը, այլ իրենց սեփական գիտությունը: Նրանք անհաստատ մարդկանց հեռացրին Աստծո խոսքից և տարան իրենց հետևից: Վերջապես հակաքրիստոսի համակարգի բոլոր բնորոշ նշանները համախմբվում են մեկ գլխի հշխանության տակ: Ասա թե ինչու Յայտնության գրքում նա կոչվում է «սուստ մարգարե»: Ինչպես Աստծո խոսքի ճշմարիտ մարգարենները, որոնց գալիս է Աստծո խոսքը, հոչակում են «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ», այնպես էլ սուստ մարգարեն հավակնում է լինել Աստծո ձայնը երկրի վրա: Մինչդեռ նրա վարդապետությունը ոչ մի ընդհանուր բան չունի ճշմարիտ խոսքի հետ: Նա կեղծ վարդապետության մարգարեն է, դրա համար էլ կոչվում է սուստ մարգարե:

Նա, ով քարոզում է այն, ինչ հակառակ է ճշմարիտ մարգարենների խոսքերին, սուստ մարգարեն է: Սուստ վարդապետը նա է, ով սովորեցնում է այլ կերպ, քան սովորեցնել են Աստծո կողմից հաստատված վարդապետները սկզբնական քրիստոնեության մեջ (2 Կորնթ.11:4): Սուստ բանները ներկայացված են որպես ճիշտ, իսկ այն, ինչ ճշմարիտ է, համարում են սուստ: Մարդիկ չեն գիտակցում, որ դարերի ընթացքում ստեղծվել են բազմաթիվ մոլորեցուցիչ ուսմունքներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն առաջին քրիստոնյաների վարդապետության և գործերի հետ:

Մինչդեռ ո՞վ է քննում Սուրբ Գիրքը՝ տեսնելու համար, թե արդյոք շարադրված ուսմունքները համապատասխանում են: Պողոսն ասում է. «Որովհետև ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո ձեր մեջ հափշտակող գայլեր կգան, որոնք հոտին չեն խնայի: Եվ հենց ձեր միջից մարդիկ վեր կկենան, որոնք սխալ բաներ կխոսեն, որպեսզի աշակերտներին իրենց հետևից քաշեն» (Գորք 20: 29,30): Մենք տեսնում ենք, որ Աստծո օծված խոսքերը շրջանակել են լավ կազմակերպված ծիսակատարությամբ: Անգետ ամբոխները տպավորված են և կարծում են, որ Քրիստոսն է այդ հաստատել: Արտաքինից տեսնում են գառան աստվածապաշտություն, բայց չեն

Ակատում կործանարար կեղծումը, որովհետև չեն ճանաչում Խոսքը: Յիսուսն ասաց. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են...» (Յովհ. 10:27): Նրա ձայնը հավիտենապէս իր խոսքն է:

Ինչպէս արդեն նշեցինք՝ սուտ մարգարեին ճանաչում ենք նրանով, որ չի քարոզում ծշմարիտ մարգարեների խոսքը, սուտ առաջալին ճանաչում ենք նրանով, որ չի քարոզում առաջալների աստվածաշնչային ուսմունքը (Յայտն. 2:2), հակաքրիստոսին ճանաչում ենք նրանով, որ սխալ ուսմունք է սովորեցնում Քրիստոսի մասին և բոլորովին չի ուզում անել, այն ինչ պատվիրել է Քրիստոսը: Արտաքինից իրը թե դավանում է Քրիստոսին, բայց խորապէս ներքաշված է սնահավատության մեջ, նույնիսկ աղոթում է մեռածներին, որն էլ սպիրիտուազմ է: Մինչեւ որքան լուրջ են այս խոսքերը. «Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի ուրիշ հրեշտակ նրանից տարբեր բան ավետարանի, բան մենք ձեզ ավետարանեցինք, նզովված լինի» (Գաղատ. 1:8):

Նա, ով հակաքրիստոսին տեսնում է որպէս աշխարհի դիկտատորի՝ քաղաքական բռնակալի իմաստով, շատ կզարմանա: Պողոսը գրում է նրա մասին՝ ասելով, թե սատանան ինչ է անելու նրա միջոցով վերջնական փուլում. « ...սուտ նշաններով ու հրաշքներով և կորուսյալների մեջ անիրավության բոլոր խարերայություններով...» (2 Թես. 9,10): Այս մարդը չունի ոչ մի աստվածաշնչային նշան կամ հրաշք, որոնք Աստծո գորությամբ կատարվել են Յիսուսի և առաջալների ծառայության մեջ: Դրա փոխարեն նա խարդավանքի վարպետ է: Այն, ինչ ոչ ոք չէր կարող անել, նրան հաջողվում է անել կրոնական քաղաքականության միջոցով: Դրանք սուտ նշաններ են, որոնք հակառակ են ծշմարտությանը: Իր ամենակրոնական ստերով և խարեւություններով կարող է մոլորեցնել բոլոր նրանց, ովքեր հավատում են իր սուտ ավետարանին: Նա կարող է խոսել ինչպէս պետական գործիչների, այնպէս էլ Եկեղեցու իշխանների հետ: Նա ունի աշխարհի լավագույն խորհրդատունների շտաբը, նա ամենից լավ տեղեկացված մարդն է, և բոլոր ճամբարներից իր մոտ են գալիս: Բոլոր քաղաքական հակադիր միտուններում նրան են դիմում որպէս միջնորդի: Նա երկրի վրա գոյություն ունեցող ամենաբարձր հոգևոր իշխանությունն է և, ինչպէս հավակնում է՝ ամենաբարձր դատական իշխանությունը:

Հակաքրիստոսը երբեք չի ունենա պատասխանված աղոթքներ, երբեք նրա միջոցով (ինչպէս Քրիստոսի միջոցով եղավ) անդամալույթը չի կարող քայլել, կույրը չի կարող տեսնել կամ խուլը՝ լսել: Չնայած դրամ՝ ողջ աշխարհը նրան կծափահարի և կպատվի. «... կորուսյալների մեջ անիրավության բոլոր խարերայություններով՝ փոխանակ նրա, որ ծշմարտության սերը չընդունեցին, որպէսզի փրկվեն, և դրա համար Աստված մոլորության ներգործություն կուղարկի նրանց, որ ստության հավատան, որ բոլորը դատապարտվեն, ովքեր ճշմարտությանը չինազանդեցին, բայց անօրենությանը հավանեցին»: (2 Թես.10-12): Մտածնեք այդ մասին. անունով հակաքրիստոսը «Քրիստոս» է օժյալ, բայց

Քրիստոսին հակառակ է: Նա խոսում է Աստծո Թագավորության մասին, բայց կառուցում է սեփական թագավորությունը, որում նա իշխում է:

ՆՐԱ ԾԱԳՈՒՄԸ

Որպեսզի ավելի լավ հասկանանք հակաքրիստոսի մարտավարությունն ու բնությունը, պետք է քննենք այն, ինչ գրված է սատանայի մասին: Դա կարող է տարօրինակ թվալ, բայց մենք ցույց կտանք նրա և սատանայի միջև եղած զուգահեռները: Եգեկ.28:12-15 համարներում կարդում ենք հետևյալը. «Դուն որ կատարելութեան կնիքն ես, ինաստութեամբ լեցուած ու գեղեցկութեան մէջ կատարեալ ես, դուն Աստուծոյ դրախտին Եղեմի մէջ էիր, քու ծածկոցդ ամենն պատուական քարերեն էին՝ սարդիոն, տպագիոն ու աղամանդ, ոսկեքար, եղնգնաքար եւ յասպիս, շափիւղայ, կարկեհան եւ զմիուխտ ու ոսկի: Քու թմբուկներուդ ու սրինգներուդ գործը քու ստեղծման օրու քեզի պատրաստուեցաւ, դուն տարածուած ու ծածկող քերովք մըն էիր ու ես քեզ դրի: Դուն Աստուծոյ սուրբ լերանը վրա էիր, դուն հրեղեն քարերուն մէջտեղերը կը շրջէիր, դուն ճանբաներուդ մէջ կատարեալ էիր, քու ստեղծուած օրու մինչեւ այն օրը, երբ քու վրատ անօրէնութիւն գտնուեցաւ» (Եգեկ.28:12-15):

Այստեղ խոսվում է Արուսյակի մասին, որին Աստված ստեղծել էր որպես հեթանոսական: Որպես Աստծո ստեղծած՝ նա կատարյալ էր, բայց մեզ նման նա էլ ազատ կանք ուներ: Դժբախտաբար նա այն օգտագործեց Աստծո դեմ դուրս գալու և ինքն իրեն բարձրացնելու համար: Նույն բանն ասվում է նրա ներկայացուցչի մասին, որն իրեն բարձրացնում է ամեն բանից ավելի: Քանի որ սատանան ամենագետ չէ, նա չէր կարող նախօրոք տեսնել իր արածի հետևանքը: Նույնը վերաբերում է հակաքրիստոսին, որը ստանձնելու է իրեն տրված առաջադրանքը: Նրա վերջը ծածկված է իրենից. նա շատ բան գիտի, բայց ոչ ամեն ինչ:

Ինչպես մեզ ասվել է, սատանան գտնվում էր Եղեմի պարտեզում: Այնտեղ էր, որ իր անկումից հետո մտավ օձի մեջ, որի միջոցով առաջին մարդկանց առաջնորդեց անհնազանդության և դրանով իսկ՝ Աստծո խոսքը խախտելուն: Հարցնելով «Աստված իդո՞ք ասաց», նա կասկած դրեց Աստծո խոսքի հանդեպ: Նույնն է անում երկրի վրա նրա ներկայացուցիչը: Այսպիսով՝ հենց սկզբից ողջ մարդկությունը ընկավ չարի ազդեցության տակ, որը միշտ կասկածի տակ է դնում Աստծո խոսքը: Դա սկսվեց անհավատությունից, հետո շարունակվեց անհնազանդությանը և վերջում եկավ մեղքը: Այսպես կատարվեց մեղքի մեջ անկումը, որի մեջ եղել ենք մենք բոլորս: Բոլորը թերացել են և մեղք գործել, որովհետև բոլորս կվարվեինք և կարձագանքինք ճիշտ Ալամի և Եվայի պես:

Ոչ միայն սատանան ընկավ, երբ ուզում էր բարձրանալ, այլև ապականություն թերեց ողջ մարդկության վրա: Մինչեւ անմիջապես անկումից հետո Տերը հայտարարեց, որ մի Փրկիչ կգա, երբ խոսեց կնոց

Սերնդի մասին, որը կշախօսիս առաջին օճի գլուխը (Ծննդ.3:15): Այդ պատճառով է, որ Յիսուսը Մարիամին «կին» էր կոչում, ոչ թե «մայր»: Յիսուսը խոսքի Սերմն էր, որի մեջ խոստացված խոսքը իրականություն էր դարձել: Մի կողմից աստվածային Սերմն Աստծո խոսքն է (Ղուկ.8:11). մյուս կողմից բարի սերմերը Աստծո Թագավորության որդիներն ու դուստրերն են (Մատթ. 13:38): Նրանք սերում են աստվածային սերմից և, այդպիսով, կազմում են աստվածային սերունդը (1 Պետր.2:9, Գործ.17:29):

Եսայի մարգարեն այսպես է նկարագրում սատանայի անկումը. «Ով առողուն ծագող Արուսեակ, ի՞նչպես երկնքեն ինկար ու մինչեւ գետինը կործանեցար, դուն որ ազգերը նկուն կ'ընէիր: Դուն սրտիդ մէջ ըսած էիր. Երկինք պիտի ելլեմ ու իմ արոռս Աստուծոյ աստղերէն վեր պիտի բարձրացնեմ եւ ժողովի լեռը, հիւսիսի քովերը պիտի բնակիմ. ամպերու բարձրութիւններուն վրայ պիտի ելլեմ, Բարձրելոյն պիտի ննանիմ'»: (Ես. 14:12-14):

Մինչև իհմա նրա ծրագրերը չեն փոխվել: Արդեն Եղեմի պարտեզից նա փորձեց իր իշխանությունը գործադրել մարդկանց վրա՝ իր ծրագրերը իրականացնելու համար: Այն ժամանակ Տյուրոսի իշխանն էր բռնված սատանայով, և այստեղ տեսնուն ենք Երկրի վրա մարդկային և սատանայական իշխանության հավակնության մի օրինակ: Նրան է Աստված դիմում իր մարգարեի միջոցով. «Որովհետեւ քու սիրտդ հպարտացաւ ու ըսիր թէ «Ես աստուած մըն եմ, ես ծովուն մէջտեղը Աստուծոյ արոռը կը նստիմ». սակայն դուն մարդ ես ու ոչ թէ աստուած, թեւ քու սիրտդ Աստուծոյ սրտին տեղ դրիր» (Եզեկ.28:2): Շատ տարօրինակ է, Երբ մարդ մտածում է, որ ինքը Աստծո ննան կարող է լինել: Մինչեւ ուա մարդը չէ, այլ սատանան է նրա մեջ, որը 2 Կորնք.4:4 համարում կոչվում է այս աշխարհի աստվածը և իշխանը: Սատանան նույնիսկ առաջարկեց մեր Տիրոջը ծնկի գալ և իրեն Երկրպագել: Դրա համար նա Նրան առաջարկում էր աշխարհի բազավորությունները (Մատթ. 4:8-10): Երկրի վրա նրա ներկայացուցիչը կորում է նույն նշանները. հարստությունն ու պատիվը չեն պակասում նրան: Նա իրեն Աստծո տեղ է դնում և ննանակում է Քրիստոսին: Բայց նա կրում է միայն սատանայի հատկությունները, ով ուզում էր Աստծո ննան լինել: Նա վերցնում է իրեն առաջարկված գանձերը:

Այսուհետև գրված է. «Քու ինաստութիւնովդ ու հանճարովդ թեզի հարստութիւն ստացար եւ գանձերուդ մէջ ոսկի ու արծաթ հաւաքքեցիր: Ինաստութեամբ ու վաճառականութեամբ հարստութիւնդ շատցուցիր եւ քու հարստութեանդ պատճառով սիրտդ հպարտացաւ» (հհ.4,5): Այս Երկրային բացահայտ նշանը նույնպես սատանայի նշան է, հետևաբար վերաբերում է իր բոլոր ներկայացուցիչներին և իր իշխանության տակ Եղողներին: Մինչև իհմա ոչինչ չի փոխվել: Ո՞վ չգիտի, թե որ գանձարաններում են բոլոր գանձերը հավաքված: Ո՞վ երբեք չի լսել ամհաշիվ հարստության, ոսկու, արծաթի, բանկագին քարերի մասին:

«Քու առուտուրիդ շատութեամբ մէջ, բռնութեամբ լեցուեցար ու մեղք գործեցիր: Ես ալ թեզ Աստուծոյ լեռնէն... վար նետեցի...» (Եզեկ.28:16):

Երբանի՞ց է սատանան առևտուր անում: Այս նկարագրության մեջ փոխ առ փոխ խոսվում է սատանայի և երկրային ղեկավարի մասին, որի մեջ նա մարմնավորվել է: Սատանան հոգնոր եակ է և կարիք ունի ֆիզիկական մարմնի, որի մեջ մտնելով՝ գործադրում է իր իշխանությունը:

Մենք պետք է լավ մտապահենք սատանայի ընդհանուր նկարագրությունը և նրա տարրեր հատկանիշները, որովհետև դրանց նորից կիանդիպենք, եթե խոսք լինի երկրի վրա նրա ներկայացուցչի մասին: Բայց այդ կարևոր է իիշել, որ նա լույսի հրեշտակի կերպարանք է առնում. նույն կերպ հայտնվում են նրա ներկայացուցիչները, նաև վերջինը, որի մեջ նա պետք է մարմնավորվի: Պողոս առաքյալը կարողացավ տեսնել այդ և գրեց. «Որովհետև այդպիսիները սուտ առաքյալներ, նենգավոր մշակներ, Քրիստոսի առաքյալների տեսք ընդունողներ են: Եվ զարմանալի էլ չէ, որովհետև սատանան ինքն էլ լույսի հրեշտակի կերպարանքն է վերցնում իր վրա: Ուրեմն մեծ բան չէ, որ նրա ծառայողներն էլ արդարության ծառայողների կերպարանքն առնեն, որոնց վերջն էլ իրենց գործերի պես կլինի» (2 Կորնք.11:13-15):

ԽՈՐՃՐԻ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄԸ

Ինչպես արդեն նշեցինք՝ Դանիել մարգարեն խորիրդանշական ձևով տեսավ վերջին ժամանակների հիմնական իրադարձությունները: Նա այդ մասին այսպես վկայեց թագավորին. «Բայց երկնքի մեջ զաղտնիքները յայտնող Աստուած մը կայ, որ Նաբուգոդոնոսոր թագաւորին կը յայտնէ ինչ որ վերջին օրերը պիտի ըլլայ» (Դան. 2:28): Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա Աստծոն ժողովուրդը ամենից լավ է տեղեկացված: Այն, ինչ Տեղն ասաց Մատթ.23:34 համարում, ուժի մեջ է նաև հիմա.«Դրա համար ահա Ես ծեզ մոտ մարգարեներ, ինաստուններ ու դպիրներ կուղարկեմ ...» Մինչ քաղաքական գործիչները ապագայի համար հույսը դնում են ենթադրությունների վրա, հավատացյալները ճանաչում են ժամանակների նշանները Աստծո խոսքի լույսի տակ: Նրանք հասկանում են, որ մենք ապրում ենք մարգարեական ժամանակաշրջանում: Նրանք կարող են ճշգրիտ կերպով դասավորել այն, ինչ մարգարեներն ու առաքյալները տեսել են տեսիլքով և գրել Սուլը Յոգու ներշնչմամբ: Աստծո խոսքը միշտ գալիս է մարգարեների մոտ, այլ ոչ թե աստվածաբանների:

Մինչդեռ ամեն ճշմարիտ մարգարե և առաքյալ Դանիելի նման կը նդունի. «Այս զաղտնիքը՝ ոչ թէ ամէն ապրողներէն աւելի իմաստութիւն ունենալուս համար ինծի տրուեցաւ...» (Դան.2:30): Իր աղոթքում Դանիելը փառաբանում է Տիրոջը և ասում. «Անիկա իմաստուններուն իմաստութիւն կու տայ ու հանճարեղներուն՝ գիտութիւն: Խորունկ ու ծածկուած բաները ինք կը յայտնէ, մութի մեջ եղածը գիտէ ու լոյսը Անոր քով կը բնակի» (հհ. 21,22):

Նախ, Դանիել մարգարեն տեսավ այն արձանը, որը նախկինում տեսել էր Նաբուգոդոնոսոր թագավորը Երազում: Նա այն այսպես է նկարագրում. «Այս մեծ ու խիստ պայծառ արձանը քու դիմացդ կայներ էր: Անոր Երեւոյթը ահաւոր էր: Այս արձանին գլուխը՝ զուտ ոսկիէ, անոր կուրծքն ու թեւերը՝ արծաթէ, մեջքն ու ազդերը՝ պղնձէ, պրունքները՝ Երկարէ ու սորերում մեկ մասը կաւէ էր» (Դան. 2:31-33): Այդ արձանը մարդկային կերպարանք էր ներկայացնում, որովհետև թվարկվում են գլուխը, կուրծքը, թեւերը, մեջքը ազդերը, սրունքները և ոտքերը: Միևնույն ժամանակ այն ներկայացնում է չորս համաշխարհային թագավորությունները, որոնք հաջորդեցին իրար:

37-45 համարներում նա մեկնաբանում է աշխարհի չորս մեծ թագավորությունները, որոնք կարելի է պատմականորեն դասավորել այսպես. բարելոյնան թագավորությունը, որի խորհրդանշին է ոսկյա գլուխը, համաշխարհային իշխանություն ունեցավ Քրիստոսից առաջ 606-538 թվականներին, մարերի և պարսիկների թագավորությունը, որի խորհրդանշիցը արծաթէ կուրծքն ու թեւերն են, թագավորեց Քրիստոսից առաջ 538-330 թվականներին, հունաց թագավորությունը՝ Ալեքսանդր Սեծի օրոք, որի խորհրդանշիցը պղնձէ մեջքն ու ազդերն են, իր հզորությամբ հայտնվեց Քրիստոսից առաջ 330 թվականից մինչև 30 թվականը. այդ ժամանակից ի վեր հիոնմեական կայսրությունը իշխանություն ստացավ և կմնա մինչև վերջ:

Յոթերորդ գլխում նույն մարգարեն տեսավ, թե ինչպես Երկնքի չորս հովերը հարձակվեցին ժողովուրդների մեծ ծովի վրա, որից դուրս եկան չորս մեծ զազաններ: Առաջինը նման էր առյուծի, Երկրորդը՝ արջի, Երրորդը՝ ընճի: Չորրորդ գազանը մանրամասն նկարագրված չէ, դրա մասին գրված է այսպես. «Անկէ ետքը գիշերուան տեսիլքներու մեջ տեսայ չորրորդ գազան մը: Անիկա ահեղ, սոսկալի ու խիստ զօրաւոր էր: Անիկա մեծ Երկարէ ակրաներ ուներ: Կ'ուտքը ու կը փշրէր ու մնացածը ոտքերով կը կոհսկուտքը: Իրմէ առաջ եկող գազաններեն տարբեր էր: Տասը Եղջիւր ուներ» (Դան.7:7):

Այս չորս զազանները, որոնք դուրս եկան այս աշխարհի ժողովուրդների զանգվածից, ներկայացնում են չորս թագավորությունները և դրանց իրական տիրակալին: Մենք մանրամասն չենք քննարկի առաջին Երեք թագավորությունները, այլ պետք է չորրորդ գազանի վերաբերյալ պարզաբանում ստանանք, որը մեզ համար շատ կարևոր է (հ.19): Դանիելը ստացավ հետևյալ տեղեկությունները. «Չորրորդ գազանը Երկրի վրայ չորրորդ թագաւորութիւնը պիտի ըլլայ, որ բոլոր թագաւորութիւններէն տարբեր պիտի ըլլայ ու բոլոր Երկիրը պիտի ուտէ ու զանիկա պիտի կոհսկուտք ու փշրէ» (հ.23): Չորրորդ գազանը, որ համաշխարհային իշխանություն ունեցող հոռմեական կայսրությունն է, ըստ աստվածաշնչային մարգարերության, կուլ է տալիս ողջ Երկիրը և տրորում ոտքերի տակ: Սա է «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՏ ՏԵՐԸ» իր խոսքում:

Հովհաննեսը տեսավ նոյն գազանին՝ 10 Եղջյուրներով, որ նույնպես դուրս էր գալիս ժողովուրդների ծովից: Նա ուներ յոր գլուխ, իսկ գլուխների

վրա՝ հայիության անուններ: Նրա Եղջյուրների վրա տասը թագ կար (Հայտն.13:1): Նորից դա համապատասխանում է այն բանին, ինչ Դանիելն ասաց յոթերորդ գլուխ 24-րդ համարում. «Այն տասը Եղջյուրները տասը թագաւորներ են, որ այն թագաւորութենքն ափիտի ելլեն»: Առաջին Երեք գազանները, որ Դանիելը տեսավ, և որոնք ներկայացնում են համաշխարհային իշխանությունները, կան նաև Հայտն.13:2 համարում և ներկայացված են չորրորդ գազանի մեջ, որի մեջ նրանք համախմբված են. «Այն գազանը, որին տեսա, ընձի ննան էր, նրա ոտքերը՝ արջի ոտքերի նման, իսկ նրա բերանը՝ առյուծի բերանի նման»:

Քիչ հետո ասվում է, որ սատանան ինքը երկրի վրա եղող վերջին թագավորության տրամադրության տակ դրեց իր գահն ու իշխանությունը. «Վիշապը նրան տվեց իր զորությունը, իր գահն ու մեծ իշխանություն: Նրա գլուխներից մեկը տեսա մահացու խոցված, բայց այդ մահացու վերջը լավացավ...» (Հայտն.13:2,3): Իսկ թե ով է այդ վիշապը, որ այդ համաշխարհային իշխանությանը տվեց իր զորությունն ու գահը, գտնում ենք Հայտն. 12:9 համարում. «Եվ ցած զցվեց մեծ վիշապը, այն առաջին օճը, որ բանսարկու ու սատանա է կոչվում»:

ԱՄԲԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դանիել մարգարեն նախօրոք տեսավ նաև հակաքրիստոսի միջոցով սատանայի իշխանության գործադրման գագարնակետը: Հակաքրիստոսը դուրս եկավ 10 Եղջյուր ունեցող գազանից, որը Դանիելին ցույց էր տրվել յոթերորդ գլխում, և նա պատնում է հետևյալը. «Եթե Եղջիւրները կը դիտէի, ահա անոնց մեջ ուրիշ պատիկ Եղջիւր մը Ելլաւ, որուն առջեւէն միւս Եղջիւրներէն Երեքը խլուեցան եւ ահա այն Եղջիւրին վրայ մարդու աչքերու պէս աչքեր ու մեծ բաներ խօսող բերան կար» (հ.8): Վերջին թագավորությունից մի անձնավորություն դուրս կգա, մի մարդ, ում խոսքը կընդունվի բոլոր կրոնական և քաղաքական առաջնորդների կողմից:

Դրա վերաբերյալ Հայտն.13:8 համարում ասվում է. «Նրան մեծ-մեծ բաներ ու հայիոյանք անող բերան տվեց, և քառասուներկու ամիս իր կամեցածն ամելու իշխանութիւն տվեց նրան»: Դա Երեք ու կես տարի տևող մեծ նեղությունն է, որ հանկարծակի է գալու հսրայելի ժողովրդի վրա:

9-րդ գլուխ 27-րդ համարում Դանիելն ասում է, որ այդ տիրակալը մեկ յոթյակով ուխտ կանի հսրայելի ժողովրդի հետ: Դա նշանակում է, որ հսրայելի ճանաչումը կլինի դիվանագիտական հարաբերությունների հաստատմանք: Ինչպես շաբաթը յոթ օր ունի, յոթնյակն էլ բաղկացած է յոթ տարուց: Բայց Դանիելն ասում է, որ յոթնյակի մեջտեղում «... զոհն ու պատարագը պիտի դադրեցնէ: Ու աւերողը պիտութեան տաճարին վրայ պիտի ըլլայ», մինչեւ որ աւերպածին վրայ նախասահմանեալ կորոստը թափուի»: Դա կատարվի վերջում՝ Աստծո հազարամյա թագավորության սկսվելուց առաջ:

Թե ինչքան կբարձրանա այդ եղջուրը, և ով է թաքնված այդ հշխանության ետևում, պարզ երևում է Դան.8:10 համարից. «Ու մինչեւ երկնքի գործը մեծցաւ ու քանի մը գործ ու աստղեր գետինը ձգեց ու զանոնք կոհսկութեց»: Նման իրադարձության հանդիպում ենք Հայտն.12-րդ գլխում, երբ սատանան վիշապի կերպարանքով երկրի վրա է գցում երկնքի աստղերը: Դրանով հասկանում ենք, որ այստեղ նորից խոսքը Աստծոն հակառակորդի մասին է, որն ուզում էր Աստծոն նման լինել և վայր ընկապ երկրի վրա:

Հակաքրիստոսը՝ սատանայի «գերմարդը», ըստ 2 Թես.2:4 համարի գոռոզացած է բոլորի նկատմամբ. «...որն Աստված կամ Աստծո պաշտոնյա է անվանվում. մինչև որ նա տաճարում (իբրև Աստված) նստի և ինքն իրեն ցույց տա, որ Աստված է»: Սուլը Գրքում Քրիստոսին հավատացողները նկարագրված են որպես Աստծոն տաճար: Բայց ինչպես Խարայելի ժամանակ տաճարը դարձել էր ավագակների որջ, այնպես էլ քրիստոնեությունը հեռացել է Աստծոն ներկայությունից: Քրիստոնեության կենտրոնում, որը պետք է ծշմարտապես լիներ Աստծո բնակության վայրը և որը ընկել է ուրացության մեջ, նստել է հակաքրիստոսը: Նա պաշտանունք է ստանում Աստծոն նման, նույնիսկ ինքն իրեն համարում է անխալական և իրեն կոչում է մի անունով, որ միայն Աստծուն է պատկանում մեր սուլը Հայր, որ երկնքուն է (Մատթ.23:9):

Դանիել 7:25 համարում ասվում է. «Բարձրեալին դէմ խօսքեր պիտի ըստ ու Բարձրեալին սուլրերը պիտի սպառէ եւ պիտի մտածէ ժամանակներ ու օրենքներ փոխել: Անոնք մինչեւ ժամանակ մը, ժամանակներ ու կես ժամանակ անոր ծեռքը տրուին»: Սուլրգրային այս հատվածից պարզ երևում է, որ ուղիղ երեք ու կես տարի տևող նեղությունը վերաբերում է միայն իրեաներին: Խոսվում է «ժամանակների» և «օրենքների» փոփոխության մասին: Դա չի վերաբերում նորկտակարանյան եկեղեցուն: Խոսքը իրեաների մասին է, ահա թէ ինչու իրեշտակն ասաց Դանիելին. «Դիմա թեզի եկայ, որպես զի իմացնեմ թէ վերջին օրերը քու ժողովողիդ ինչ պիտի պատահի...»:

Դան. 11:32 համարում ասվում է, թե հակաքրիստոսին ինչպես է հաջողվում իր կողմը գրավել մարդկանց. «Ու ուխտին դէմ ամբարշտութիւն ընողները շողորորթութիւններով գլխէ պիտի հանէ»: Հակաքրիստոսը քաղաքական դիկտատոր չէ, որն առաջացնում է ժողովրդի զայրույթը, այլ աշխարհի բոլոր կրոնական և քաղաքական ոլորտներում ճանաչված հեղինակություն, արժեք: «Անոր իշխանութիւնը պիտի գորանայ, բայց ո՞չ թէ իր գորութիւնովը (իիշենք, որ վիշապը նրան տվեց իր իշխանությունն ու զահը) ու անիկա ահաւոր աւերներ պիտի գործէ ու իր կատարածներուն մէջ պիտի յաջողի, պիտի կործան գորաւոր մարդիկն ու սուլրերու ժողովուրդը: Իր խորանանկութեամբ պիտի յաջողի իր նենգաւոր ճանբաներուն մէջ ու իր սրտին մէջ պիտի հպարտանայ ու խաղաղութեան մէջ շատերը պիտի կորսնցնէ» (Դան.8:24,25) Միացյալ Նահանգների նախագահը և ԽՍՀՄ առաջին քարտուղարը սահմանափակ իշխանություն ունեն: Բայց այդ

մարդը համաշխարհային իշխանություն ունի. ազդեցություն ունի ինչպես կրոնական ասպարեզում, այնպես էլ համաշխարհային քաղաքականության մեջ:

Իր ահաբեկչական վարչակարգի ժամանակ հակաքրիստոսը կիայտնվի գաղանի բնույթով և նույնիսկ հայությանը կիսուի Աստծո դեմ, ինչպես գրված է Հայտն.13:6 համարում. «Եվ նա իր բերանն Աստծո դեմ հայությանը վացեց, որպեսզի հայությ նրա անվանը, նրա խորանին ու երկնքում բնակվողներին»: Այն ժամանակ փրկագնվածների խումբը արդեն բնակվելիս կլինի երկնքում:

Տերը խոստացել է իրեններին Հովհ.14:2,3 համարներում. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, իսկ եթե ոչ ես ձեզ կասեի՝ "Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելո": Եվ երբ զնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, նորից կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ, որպեսզի ուր որ ես եմ, դուք էլ լինեք»: Բոլոր նրանք, ովքեր սպասում են Քրիստոսին, կիափշտակվեն մինչև Աստծո բարկության ահեղ օրը (1 Թես.5:9), և դա կլինի այնպես, ինչպես նկարագրել է Պողոս առաքյալը 1Թես.4:13,17 համարներում:

Մինչ երկրի վրա տեղի է ունենում մեծ նեղությունը, փրկագնվածները գտնվում են փառքի մեջ: Հովհաննեսը տեսավ հաղթողների խմբին ապակեղեն ծովի վրա. «Եվ տեսա՝ իրրև ապակեղեն ծով, կրակի հետ խառնված, նաև նրանց, ովքեր հաղթեցին գաղանին ու նրա արձանին, նրա դրոշմին ու նրա անվան թվին, որ կանգնած էին ապակեղեն ծովի վրա և Աստծո քարերն ունեին» (Հայտն.15:2): Հաղթողների խումբը բաղկացած կլինի նրանցից, ովքեր հաղթել են գաղանի պատկերին և նրա անվան թվին: Այդ մասին դեռ կիսունք:

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆՆԵՐ

Դանիել մարգարեն ուրիշ տեսանելի և լսելի նշաններ է տալիս այդ մարդու վերաբերյալ, որն իրեն նաև թագավոր է կարծում: Վերջ ի վերջո, նրա թագավորական պալատը գերազանցում է բոլոր պալատներին: Դանիել մարգարեի 11-րդ գլուխ 36-րդ համարում ասվում է հետևյալը. «Այն թագաւորը իր ուզած պիտի ընել ու գինը բոլոր աստուածներէն վեր պիտի բարձրացնէ ու պիտի մեծցնէ եւ աստուածներուն Աստուծոյն դէն սոսկայի բաներ պիտի խօսի ու յաջողութիւն պիտի գտնէ...»: Անվերջ հանդիպում ենք այդ մարդու ամբարտավանությանը: 37-րդ համարում նաև ասվում է. «Ան իր հայրերուն աստուածներուն մասին պիտի չմտածէ, ո՞չ ալ կիներու ցանկութիւններու մասին ու ուեւ աստուած պիտի անտեսէ, քանզի ինքնային ամէնէն մեծ պիտի սեպէ»: Աստված այնքան հստակորեն է նկարագրել նրա անհատականության նշանները, որ նույնիսկ մի հասարակ մարդ կարող է դրանք հասկանալ: Տերն է հաստատել ամուսնությունը, բայց այդ մարդը մերժում է այդ և հակառակվում

աստվածային կարգ ու կանոնին: «Զի մտածի կանանց ցանկությունների մասին»՝ գրում է Դանիել մարգարեն Սուլը Հոգու ներշնչմաբ:

Մարգարեական հայացքով Պողոս առաքյալն այդ մասին գրում է իր գործակից Տիմոթեոսին ուղղված նամակում: Նա գրում է դևերի և մոլորեցուցիչ ոգիների ուսմունքի մասին և անմիջապես անցնում է գործի «միջուկին» այս խոսքերով. «Որոնք ամուսնանալը կարգելեն, կիրաժարվեն ուտելիքներից...» (1Տիմ. 4:3): Եվս մեկ անգամ շեշտում ենք, որ Տերն է ասել. «Լավ չէ, որ մարդ մենակ լինի» (Ծննդ.2:18): Կուսակրոնության վարդապետությունը աստվածապաշտության կերպարանքն ունի, բայց Աստծո անսխալական խոսքում քողազերծվում է որպես կեղծ, դիվական վարդապետություն: Մտածենք այդ մասին. հակա-խոսք՝ հակա-Քրիստոս:

Պողոսը գրել է Կորնթոսի Եկեղեցուն. «Մի՞թե մեզ հետ քոյլ, կին ման ածելու իշխանություն չունենք, ինչպես ուրիշ առաքյալները, Տիրոջ եղբայրներն ու Կեփասը» (1Կորնթ.9:5): Այստեղ մեզ ասկում է, որ Յիսուսի եղբայրներն էլ կին ունեին: Չորս Ավետարաններում բազմիցս հիշատակվում են Յիսուսի եղբայրները, իսկ Մատթ.13:55 համարում նույնիսկ գրված են նրանց անունները: Դա հստակորեն ժմտում է այն իին առասպելը, ըստ որի Մարիամն ուրիշ երեխաներ չի ունեցել: Այդ առասպելը հնարել են Մարիամին տրված պաշտամունքի պատճառով: Ըստ Գործք 1:14 համարի՝ վերնատանը հավաքված 120 հոգու մեջ էր նաև Մարիամը՝ Յիսուսի մայրը և Յիսուսի եղբայրները:

Այնուհետև խոսվում է այդ համակարգի դեկավարի մասին. «Ան բերդերուն աստուածը իր եղած տեղը պիտի պատուի ու իր հայրերուն չճանչցած աստուածը ոսկիով, արձաքով, պատուական քարերով ու ցանկալի բաներով պիտի պատուէ» (Դան.11:38): «Բերդերի աստծուն պիտի պաշտի» արտահայտությունը մեզ պատմում է այդ կրոնական իշխանության ետևում եղած ռազմական գործողությունների մասին: Պատմությունը վկայում է խաչակրաց արշավանքների, կրոնական պատերազմների, ավերածությունների մասին, որոնք կատարվել են Աստծո անունով, խաչի խորհրդանիշի տակ: Յամատեքստը ավելի հստակ դարձնելու համար անընդհատ հիշատակվում են ոսկին, արձաքը, քանկազին քարերը: Այն աստվածը, ում նա պաշտում է, այն աստվածը չէ, որին պաշտել են իր նախնիները: Աբրահամի, իսահակի և Յակոբի Աստվածը բոլորովին ուրիշ Աստված է:

ԳԱԶԱՆԻ ՎՐԱ ՆՍՏԱԾ ՊՈՌՍԻԿԸ

Այժմ հանդիպում ենք բոլորովին նոր խորհրդապատկերի, որը նույնպես պատկանում է Երկրային-քաղաքական և կրոնական-հոգևոր իշխանություններից բաղկացած հակաքրիստոնեական համաստեղությանը: Աստված իրավացիորեն է ընտրել այդպիսի խորհրդապատկերներ: Ավելի հստակ և հասկանալի հնարավոր չէր ներկայացնել: Յայտն.17-րդ գլխում

Վերջին թագավորությունը մեզ ներկայանում է իր վերջնական փուլում: Դրանում գլխավոր դերը խաղում է մեծ պոռնիկը, որը նստած է գազանի վրա, այսինքն՝ իշխանություն ունի աշխարհի գորությունների վրա և նրանց օգտագործում է իր նպատակին հասնելու համար: Հովհաննեսը լսեց մի ձայն, որն ասում էր. «Եկ քեզ ցույց տամ այն մեծ պոռնիկի դատաստանը, որ այն շատ ջրերի վրա է նստում: Նրա հետ խառնակվեցին երկրի թագավորները, և երկրի բնակիչները նրա պոռնկության գինով արբեցին» (Յայտն.17:1,2): Ուշադրություն դարձնենք, որ այդ դատաստանը Աստծոն տեսանկյունից է: Մարդկանց տեսանկյունը բոլորովին տարբեր է: Երկրի հզորները մրցակցում են իրար հետ նրա բարեհաճությանն արժանանալու համար, իսկ երկրի բնակիչները կորցրել են ողջամիտ կերպով դատելու ունակությունը: Այնուհետև Հովհաննեսն ասում է հետևյալը. «Եկ ինձ հոգով տարավ մի անապատ, ու տեսա մի կնոջ՝ նստած կարմիր գազանի վրա, հայիության անուններով լի, որ յոթ գլուխ ուներ և տասը եղջյուր» (Յայտն.17:3):

Այս խոսքի իմաստն ավելի լավ հասկանալու համար պետք է ուշադրություն դարձնենք «կին» բառին և տեսնենք, թե ինչու է Սուրբ Գիրքը խոսում «պոռնիկի» մասին: Յին Կտակարանում Աստված բազմիցս անվանում է իսրայէլին իր կինը, իր Եկեղեցին, ում մեջ նա դմում է իր խոսքի Սերմը: Ավելի ուշ նա նրան հանդիմանում է անհավատարմության համար և նախատում է հոգևոր շնության համար՝ կուրքերի պաշտամունքի հետ կապված: Նա հեռացել էր խոսքից, դրանով իսկ՝ Աստծուց. նա ընդունել էր օտար սերմ և սկսել էր գործել հոգևոր շնություն: «Վիճեցեք ձեր մօրը հետ, վիճեցեք, քանզի անիկա ին կինս չէ ու ես անոր այրը չեմ: Անիկա իր երեսն իր պոռնկութիւնները ու իր ծիծերուն մէջն իր շնութիւնները թող վերցնէ... անոր որդիներուն ողորմութիւն պիտի չընեմ, քանզի անոնք պոռնկութեան որդիներ են: Անոնց մայրը պոռնկութիւն ըրաւ, զանոնք յղացողը խայտառակութիւն գործեց» (Ովսէ 2:4,5):

Տերն ասաց Երեմիա մարդարեին. «Ապստամբ իսրայէլի ըրածը տեսա՞ր. Անիկա ամէն բարձր լերայ վրայ ու ամէն կանանչ ծարի տակ գնաց ու հոն շնութիւն ըրաւ» (Երեմ.3:6): Աստծոն և իր խոսքի դեմ ապստամբությունը աստվածապաշտությունը փոխում է կռապաշտության: Այսպես է ծնվում Աստծոն սուստ զավակների սերունդը, որոնք միաժամանակ կոչվում են անհավատարիմ կնոջ զավակներ. «Իրենց գործերը գիրենք չեն թողուր, որ իրենց Աստուծոյն դառնան. քանզի անոնց մէջ պոռնկութեան ոգի կայ ու Տերը չեն ճանչնար... Անոնք Տերոցը անհաւատարմութիւն ըրին, քանզի օտար տղաքներ ծնան» (Ովսէ 5:4,7):

Բայց Տերը Ովսէին ցույց տվեց նաև նորկտակարանյան Եկեղեցու վիճակը, որում նա հայտնվել էր շնորհիք և փրկագննան միջոցով: Նա այդ մասին այսպես է ասում. «Քեզ յակատեան ինծի պիտի նշանեմ. քեզ արդարութիւնով, իրաւունքով, ողորմութիւնով ու գքութիւնով ինծի պիտի նշանեմ. այս՝ քեզ ճշմարտութիւնով ինծի պիտի նշանեմ ու Տերը պիտի ճանչնաս» (Ովսէ 2:19-20): Դառնալով մարդ՝ Աստված իր Եկեղեցու հետ

հաստատեց սիրո հարաբերություն: Որպես Տերը՝ Նա դարձավ նրա Փրկիչը, և խաչի մահվան շնորհիվ իրեններին մեկրնդմիշտ շնորհեց հաշտեցում և թողություն: Իր սիրով և գրությամբ նրանց նորից տալով Աստծոն արդարությունը՝ Նա խաճաշփորությունից դուրս կանչվածներին, այսինքն՝ իր սիրելիներին դրեց «Հարսի» կարգավիճակում: Փրկագնվածները կազմում են «Հարս-Եկեղեցին»: Նա նրանց «Փեսան» է:

Եթե Յովհաննես Մկրտիչը՝ Աստծոն կողմից ուղարկվածը, ներկայացավ, ասաց այս խոսքերը. «Հարսն ունեցողն է փեսա, բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է ու լսում է նրան, փեսայի ձայնի վրա ուրախանալով ուրախանում է» (Յովհ.3:29): Օրենքն ու մարգարեները մինչև Յովհաննես Մկրտիչն են, դրանից հետո քարոզվում է Աստծոն Թագավորությունը (Պուկ. 16:16): Յովհաննես Մկրտիչն առաջինն էր, որ խոսեց Հարսի ու Փեսայի մասին: Նոր ուխտի ժամանակաշրջանում Տիրոջ Եկեղեցին՝ Եկեղեցան, գտնվում է «Հարսի» կարգավիճակում: Մատքեռուի Ավետարանի 25-րդ գլխում Տեր Յիսուսն իր մասին խոսում է որպես Փեսայի, և իր Վերադարձի ժամանակ ինաստուն, սուրբ և Յոգով լցված կոլյսերը իր հետ կմտնեն Գառնուկի Հարսանիքի սրահը: Կատարելության հասածների խումբը մեզ ցույց է տրվում փառքի մեջ Հայտն.19:7 համարում: Նրանք աղաղակում են. «Խնճանք և ուրախ լինենք ու փառք տանք Նրան, որ Գառան հարսանիքը Եկավ, և նրա կինը պատրաստեց իրեն»: Ինչպես, որ կա ճշմարիտ Հարս, որը Մարիամի նման կույս լինելով ընդունեց իր ժամի համար խոստումի խոսքը, կա նաև մի պոռնիկ, որը ընկել է Աստծոն ներկայությունից և ընդունել օտար սերմ: Հայտնության գրքի 17-րդ գլխում նկարագրվում է ուրացության մեջ գտնվող այդ հաստատությունը: Յենց այդ գլխում է նա կոչվում «մեծ պոռնիկ»: Ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է նրան համեմատել Հայտն. 12-րդ գլխում նկարագրված կնոջ հետ, որը խորհրդանշում է ծշմարիտ Եկեղեցին: Չենք կարող չնկատել այս երկու մարգարեական խորհրդապատկերների միջև եղած մեծ տարբերությունը:

Հայտն. 12-րդ գլխում նկարագրված կինը արև է հագել: Դա մեզ ցույց է տալիս Քրիստոսին՝ Արդարության Արեգակին, որով Նա իրեններին պարգևել է շնորհիվ վիճակը Նոր ուխտի ժամանակաշրջանում: Լուսինը ներկայացնում է Յին Կտակարանը՝ իրեն տրված խոստումներով: Որովհետև դա է Նոր Կտակարանի հիմքը: Ինչպես բնական կյանքում լուսինը իր լույսը ստանում է արևից, այնպես էլ հոգեոր ինաստով Յին Կտակարանը լուսավորվում է Նոր Կտակարանում խոստումների իրականացումով: Նոր Կտակարանը պարունակում է Յին Կտակարանի բոլոր խոստումների իրականացումը:

Նոր Կտակարանի Եկեղեցին հաստատված է Յին Կտակարանի հիմքի վրա: Յինուսը և իր առաջալները վկայակոչում էին բացառապես Յին Կտակարանը, որովհետև այն ժամանակ Նորը նույնիսկ գրված չէր: Այս ամենը, ինչ փրկության պատմության տեսանկյունից կատարվում է Նոր Կտակարանում, կարող է անվիճելի կերպով ապացուցվել Յին Կտակարանում: Ահա թե ինչու Յին և Նոր Կտակարանները մեկ

ամբողջություն են կազմում: Յին Կտակարանում Աստված հաղորդեց փրկության մասին, Նորում պարգևեց այն: Տասներկու աստղերի պսակը, որ կրում է կիճը, ցույց է տալիս, որ ծշմարիտ Եկեղեցին պսակված է 12 առաքյալն երի Վարդապետությամբ: Յայտն. 12-րդ գլխի խորհրդապատկերում կիճը հղի է և աղաղակում է Երկունքի ցավերի մեջ: Իսկ դա նշանակում է, որ Խոսքի սերմը ստացած Եկեղեցուց ծննդի միջոցով պետք է դուրս գա հաղողների խումբը: Կանչվածների մեծ բազմությունից դուրս են գալիս ընտրյալները:

«Վիշապը կանգնած էր այս կնոջ առաջ, որ պիտի ծննդաբերեր, որպեսզի երը ծներ, նրա զավակին կուլ տար» (Յայտն. 12:4): Ուշագրավ է, որ այս վիշապը ծիշտ այն գազանի նման, որի վրա ըստ Յայտն. 17-րդ գլխի, նստած էր պոռնիկը, նույնպես ունի յոթ գլուխ և տասը եղջյուր: Սատանայի թագավորությունը հակաքրիստոսի թագավորությունն է: Սատանային հաջողվել է հստատել իր թագավորությունը իր ներկայացուցչի միջոցով, որը իրականացրել է իրեն առաջարկված ծրագրերը:

Թեև ընտրյալները չեն անցնի Յայտնության գրքում գրված բարկության մեծ դատաստաններով, չեն կարող խուսափել նեղություններից կարծ ժամանակ տևող փորձության ժամանակ: Դա երևում է նրանից, որ վիշապը բարկությամբ կանգնում է կնոջ առջև: Երկրի վրա ունեցած իր գորությամբ նա ճնշում է Եկեղեցուն: Յենց որ քաղաքական և կրոնական իշխանությունները միավորվեն, քաղաքական ոլորտում ճնշում կլինի կրոնավոր մարդկանց կողմից: Նրանք, ովքեր չեն հնազանդվի այն ժամանակ իշխող պետական համակարգին, որը իշխելու է կրոնական համակարգի հետ, կզգան դրա հետևանքները:

Այժմ պետք է նորից անդրադառնանք յոթ գլուխ և տասը եղջյուր ունեցող գազանի վրա նստած մեծ պոռնիկին: Գազանի վրա նստած պոռնիկը այս աշխարհի կրոնական իշխանությունն է, որն ընկել է Աստծո ներկայությունից, և ինչպես երևում է խորհրդապատկերից, ունի համաշխարհային քաղաքական իշխանություն: Նա հագել էր ծիրանի և կարմիր, զարդարված էր ոսկով, թամկագին քարերով և մարգարիտներով (Յայտն. 17:4): Բացատրության կարիք չկա. Երկրի վրա միայն մեկ այդպիսի հաստատություն կա: «...և իր ձեռքին մի ոսկի բաժակ ուներ՝ լի գարշելիքներով և իր այլօծ պոռնկութեամբ»: Չնայած իր շքեղ արտաքինին՝ նրա ձեռքի ոսկե բաժակը լի էր գարշելի բաներով:

Յայտն. 17-րդ գլխի պոռնիկը նաև մայր է: 5-րդ համարում ասվում է. «Եվ նրա ճակատին մի անուն էր գրված՝ «Խորհուրդ, Սեծ Բարելոն՝ պոռնիկների ու երկրի գարշելիքների մայրը»: Վերջին փուլում դա ոչ միայն Բարելոնն է, այլև «Սեծ Բարելոն»: Նա շատ աղջիկներ ունի, որոնք իրենից են դուրս եկել: Ինչպես մայրը ընկավ Աստծո ներկայությունից և անհավատարիմ եղավ Նա, այդ առ Վարչեցին նաև իր դուստր երը՝ հարանվանությունները: Նրանք հեռացել են Աստծո սկզբնական Խոսքից և դրանով հեռացել են Աստծուց, խճճել են իրենց սեփական վարդապետությունների և իրենց իսկ ձևակերպած դավանանքների մեջ:

Նրանք ժառանգել են իրենց մոր ոչ սուրբգրային ավանդույթները և նրա նման էլ Աստծո աչքերի առջև հոգևոր պղոմնկություն են արել, և այդ պատճառով է Տեր նրանց նույնպես պղոնիկ կոչում:

Այն ինչ Յովհաննեսն ասում է վեցերորդ համարում, ցնցող է. «Եվ տեսա այն կնոջը՝ սրբերի արյունով ու Յիսուսի վկաների արյունով արբած: Եղի նրան տեսա, մեծ զարմանքով զարմացա»: Եկեղեցու պատմությունը տարբեր վկայություններ է անում զոհերի թվի վերաբերյալ: Ամենամեծ թիվը, որ հայտնի է հեղինակին, 68 միլիոն է: Բայց հավատքի համար սպանվածների իսկական թիվը գիտի միայն Աստված: Ուրեմն զարմանալի չէ, որ Յովհաննեսը զարմացավ, երբ տեսավ այդ կնոջ՝ սրբերի և Յիսուսի վկաների արյունով արբած: Անտեղյակ մարդիկ դա չեն կարող պատկերացնել, բայց Քրիստոսի ծշմարդիտ հավատացյալները բոլոր ժամանակներում հալածվել են հակաքրիստոսի համակարգի կողմից: Յայտնության գրքի 18-րդ գլխում կարդում ենք. «... քո կախարդությանը նոլորվեցին բոլոր ազգերը: Եվ նրա մեջ գտնվեց մարգարեների, սրբերի և երկրի վրա սպանվածների արյունը»: (hh. 23,24)

Եկեղեցու պատմությունը թաթախված է նահատակների արյան մեջ: Միայն 1962-1965 թվականներին տեղի ունեցած Վատիկանի II տիեզերաժողովի ժամանակ էր, որ որոշեցին հանել անեքքը հրեաների վրայից, երբ որոշել էին նրանց խարանել «Քրիստոսին սպանողներ» բառով: Պապերից եկող այդ անեքքի պատճառով այս բոլոր դարերի ընթացքում հրեաները հալածվել են, սեփականազրկվել և սպանվել: Նույնը պատահել է բոլոր այլադավանների հետ: Բայց ո՞վ է այսօր խոսում Իռլանդիայի կոտորածի մասին: Ո՞վ գիտի Խապանիայի ինկվիզիցիայի կամ Ֆրանսիայում Քարդուղիմենոսի գիշերվա իսկական պատճառները: Ո՞վ է հիշում, թե ինչ է կատարվել հոլոքոստների կամ մենանիտների հետ: Ո՞վ է լսել Պիեմոնտի վալդենսների սեփականազրկման և արտաքսման մասին: Ո՞վ գիտի այն բոլոր նզովքների մասին, որոնք ասվել են, մասնավորապես Տրիենտի տիեզերական ժողովի ժամանակ «հերձվածողների» հանդեպ հոչակված նզովքների: Այս նզովքները երբեք չեղյալ չեն հայտարարվել, այդ «հաստատության» ո՞չ էությունը, ո՞չ նպատակները չեն փոխվել, փոխվել է միայն նրա ռազմավարությունը: Մի՞թե բոլոր մյուսները, այսինքն՝ աստվածաշնչյան հավատացյալները միշտ չեն համարվել հերձվածողներ, աղանդավորներ և այլն:

Յայտն.17:7 համարում մեկ անգամ ևս նկարագրվում է այդ խորհրդավոր հաստատությունը: Յրեշտակը հարցնում է Յովհաննեսին. «Ինչո՞ւ զարմացար: Ես քեզ ասեմ այդ կնոջ խորհուրդը և այն գազանինը, որ իր վրա է վերցրել նրան, որ յոթ գլուխ ունի ու տասը եղջյուր»: Այնուհետև Յովհաննեսը ստանում է հետևյալ բացատրությունը. «Գազանը, որին տեսար, որ կար ու այժմ չկա. անդունդից է դուրս գալու և դեպի կորուստ է գնալու»: Այդ գորությունը չի գալու վերևից, այլ ներքեւից: Նրա դեկավարը և իրեն հետևողները գնում են կորստյան, ինչպես Յուդան: Յօննեական կայսրության անկումով Յօննը որոշ ժամանակով կորցրեց իր

համաշխարհային գորությունը: Մինչդեռ վերջում իր կրոնական ազդեցության միջոցով նորից կզորանա աներևակայելի ձևով:

Թող հետևյալ համարները ցուն վերջին կասկածները նրանց, ովքեր դեռ կասկածում են. «Այստեղ իմաստուն միտք պետք է ունենալ. այդ յոթ գլուխները յոթ սարերն են, որոնց վրա կինը նստած է» (Հայտն. 17:9): Համատեքստից պարզ երևում է, թե որն է յոթ բլուրների վրա կառուցված այդ քաղաքը: Նա, ով ուշադիր է կարդացել, պետք է ծիշտ հասկանա այս կնոջ նկարագրությունը, որի նստավայրը այսպես կոչված հավիտենական քաղաքում է: Բայց ինչպես ասում է Աստծո Խոսքը՝ պետք է աստվածային իմաստություն և հասկացողություն այդ բաները ճանաչելու համար:

Բայց այդ յոթ գլուխները միայն մեկ նշանակություն չունեն. դրանք խորհրդանշում են յոթ հշշակավոր տիրակալներին, որոնցից հինգը հայտնվել էին արդեն, երբ Հովհաննեսը տեսավ տեսիլքը: Վեցերորդը կար Հովհաննեսի ժամանակ, իսկ յոթերորդը պատկանում է վերջին ժամանակներին: Երրորդ, այդ յոթ գլուխները խորհրդանշում են նորից վերականգնված համաշխարհային հօռնեկան կայսրության ղեկավորող գլուխները: «Եվ այն գազանը, որ կար ու այժմ չկա, նա էլ ութերորդն է և այն յոթից է, որ կորսույան է գնալու» (հ.11): Սա շատ հետաքրքիր է: Այստեղ խոսվում է ութերորդ տիրակալի մասին, որը կոչվում է նաև Գազան:

Ով այցելի Վատիկանը, նախ կտեսնի, որ դա ինքնուրույն պետություն է և ունի այն ամենը, ինչ պատկանում է Երկրային կառավարությանը: Այսպիսով՝ հասկանալի է դառնում, որ ութերորդը աշխարհագրականորեն պատկանում է յոթին, այնուամենայնիվ գոյություն ունի որպես ինքնուրույն «Վատիկան քաղաք»: Դա պետություն է մեկ ուրիշ պետության մեջ: Ավելի պարզ չէր կարող ասվել: Որպեսզի աստվածաշնչյան մարգարերությունը կատարվի, Բենիտո Մուսսոլինին 1929 թվականին Լատերանի պայմանագրով պատճին տվեց Վատիկան քաղաքի վրա գերիշխանության իրավունք: 1933 թվականի հուլիսի 20-ին կնքվեց Հիտլերի և Պիոս XI-ի միջև կայսրության պայմանագիր: Այդպես էր, որ այս երկու կարուիկները ունեցան ազդեցիկ եկեղեցին իրենց թիկունքում:

Սրա վերաբերյալ Հովհաննեսն ասում է հետևյալը. «Այն ջրերը, որ տեսար, ուր որ պոռնիկը նստած է, ժողովուրդներ են, բազմություններ, ազգեր ու լեզուներ» (Հայտն. 17:15): Սա վերաբերում է Եվրոպային, որտեղ այն ժամանակ էլ կային շատ ժողովուրդներ և լեզուներ: 18-րդ համարը ոչ մի բացատրության կարիք չունի. «Այն կինը, որին տեսար, այն մեծ քաղաքն է, որ բագավորում է Երկրի թագավորների վրա»:

Ո՞վ կարող է ժխտել այն փաստը, որ բոլոր հեղինակավոր մարդիկ, հատկապես քաղաքական գործիչները, ովքեր ուզում են հայտնի դաշնալ, գնում են Հռոմ: Եթե Վատիկանը չիներ այդ քաղաքում, ոչ որ դրան ոչ մի կարևորություն չէր տա: Բայց իհմա լրատվամիջոցների վերտառությունների և ռեպորտաժների թեման բոլոր համակարգերին պատկանող անհատականությունների ընդունելության մասին են:

Դիվանագիտական ուղիները նրան հնարավություն են տվել անսահմանափակ իշխանություն ունենալու աշխարհի բոլոր կարևոր պետություններում: Երկրի վրա միայն մեկ իշխանություն կա, որը ինչպես բացահայտ, այնպես էլ գաղտնի կերպով իշխանություն է գործադրում քաջավորների և պետական գործիչների վրա, ժողովորդավարական և դիկտատորական համակարգերի վրա: Միայն մեկ գերտերություն կա, որն ընդգրկում է ողջ երկիրը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՆ

Այս հաստատությունը շատ կարևոր է իր վերջնական փուլում: Համաշխարհային զարգացումները թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ոլորտներում ստիպում են թույլ պետություններին համագործակցել ուժեղ պետությունների հետ: Այս դեպքում Արևմտյան Եվրոպայի յոթ երկրները գլխավոր դեր են խաղում, հենց այդ են խորհրդանշում յոթ գլուխները:

Վերջում գլխավոր ուժը դուրս կգա «Եվրոպական համայնքից»: Այս համայնքի հիմքը գցվել է 1957 թվականին Շոռնի պայմանագրով: Շոռնի պայմանագրի կնքումն արդեն աստվածաշնչյան մարդարենություններից մեկի իրականացումն է: Այդ պայմանագրի կնքման մեջ վճռական դեր խաղացին երեք քաղաքական գործիչ՝ Ռոբերտ Շումանը (Ֆրանսիա), Ալկիդե դե Գասպերին (Իտալիա) և Կոնրադ Ալենաուերը (Գերմանիա): Երեքն էլ քրիստոնյա- դեմակրատներ և կաթոլիկներ էին և լցված էին հոգնեակաթոլիկական ինտերնացիոնալիզմով: Իսկապես մեծ հաջողությամբ է կատարվում հօռմեական կայսրության աշխուժացումը: Ֆրանսիայի նախագահ Շարլ դը Գոլը, որն արդեն մտել է պատմության մեջ, ուներ միացյալ Եվրոպայի տեսիլքը, որը տարածվում էր մինչև Ուրալ: Տարօրինակ է, որ Միխայիլ Գորբաչեվը արևելյան Բեռլինում 1986 թվականի ապրիլին տեղի ունեցած կուսակցական կոնֆերենցիան ժամանակ արտահայտել է նույն միտքը: Մենք պետք է իրադարձությունների այս արագ զարգացումը դիտենք աստվածաշնչյան մարդարենության տեսանկյունից և դրանք դասավորենք դրա համաձայն: Ամեն բան կկատարվի այնպես, ինչպես կանխասավել է:

Եթե Կոնրադ Ալենաուերը ընդուներ այն առաջարկը, որ Ստալինն արեց իրեն 1952 թվականի մարտի 10-ի հայտագրում, ոչ մի սահման չէր լինի Եվրոպական երկրներից մեկի (Գերմանիայի) արևելյան և արևմտյան մասերի միջև: Մինչդեռ այդ որոշումը պետք է ընդունվեր, այլապես Եվրոպական Համայնքը չէր ունենա իր «լոկոմոտիվը»: Ստալինն առաջարկեց պատերազմից հետո բաժանված Գերմանիայի վերամիավորումը, մի պայմանով, որ նա չեզոք մնա: Ալենաուերը հաշվարկում էր բողոքական բնակչություն ունեցող ԳԴՀ-ում մոտակա ընտրությունների ելքը, դրա համար մերժեց Ստալինի առաջարկը: Իսկ

Ավստրիան ընդունեց չեզոքության առաջարկը և, անշուշտ, չի գոջացել դրա համար:

Մինչ յոթ գլուխմերը վերջում իշխող համակարգի հաստատուն ճամ են կազմում, տասը եղջյուրները հայտնվում են միայն մարդարեական իրադարձության վերջին ժամանակաշրջանում. «Եվ այն տասը եղջյուրը, որ տեսար՝ տասը թագավորներ են, որոնք դեռ թագավորություն չեն ստացել, այլ այն գաղանի հետ թագավորի պես մեկ ժամ իշխանություն են ստանալու: Սրանք մեկ կամք ունեն և իրենց զորությունը և իշխանությունը գաղանին կտան...որովհետև Աստված նրանց սրտերի մեջ դրեց, որ իր կամքը կատարեն, միակամ լինեն և իրենց թագավորությունը գաղանին տան, մինչև որ Աստծո խորեղո կատարվեն» (Յայտն.17:12,13,17):

Այստեղ խոսվում է մի որոշակի ժամի մասին, եթե սկսվում է իշխանության գործադրումը և մի որոշակի ժամանակի մասին, եթե այն վերջանում է: Ընդհանուր նկարագրությունից երևում է, որ 10 եղջյուրները խորհրդանշում են Արևելյան Եվրոպան, ի հակադրություն յոթ գլուխների, որոնք գտնում ենք Արևմտյան Եվրոպայում:

Վերջնական փուլուն արևելքի երկրները Ռուսաստանի գլխավորությանք ստիպված կլինեն միանալ միավորված Եվրոպային: Արդեն այսօր տեսնում ենք, որ քայլ առ քայլ մոտենում են դրան: Արևելյան բլոկում արևմտաքի մասնակցությունը արևելքին ուրիշ ընտրություն չի թողնի, քան միայն միավորմանը մասնակցելը: «Խաղաղության և ապահովության» համար անհանգստությունը նույնական է նրանց կտանի ընդհանուր բանակցությունների սեղանի շուրջը:

Դանիելի գրքի 2:43 համարում տեսնում ենք, որ արձանի ոտքերի մի մասը երկարից էր, մյուսը՝ կավից, այսինքն՝ իրարից լիովին տարբեր նյութերից։ Երանք խառնվում էին իրար առանց միաձուլվելու։ Այս երկու նյութերը՝ երկարն ու կավը չեն կարող միաձուլվել։ Նույն էլ Արևելյան և Արևմտյան Եվրոպան։

Արևելյան Եվրոպայի երկրները կիմանան Յօնինի եկեղեցու ծրագրերը և կիանդուրժեն նրան միայն մինչև որոշակի ժամանակ: Նրանք կենքարկվեն այդ իշխանությանը միայն մինչև աստվածաշնչյան նարգարեռության հրականացումը, իսկ հետո ձեռք կրարձրացնեն պոռնիկին զարկելու և ոչնչացնելու համար, ինչպես գրված է Յայտն.17:16 համարում. «Եվ տասը եղջյուրները, որ տեսար գազանի վրա, նրանք կատեն պոռնիկին, նրան անայի ու մերկ կղաքանեն, նրա նսերը կուտեն ու կրակով կայրեն նրան»: Դա կլինի հանկարծակի հարձակում, որովհետև ասվում է. «Վա՞յ, վա՞յ թեզ, մեծ քաղաք Բաբելո՞ն, զորավո՞ր քաղաք, որ քո դատաստանը մեկ ժամում եկավ» (Յայտն.18:10): Որպեսզի բոլորը հասկանան, թե ում ճասին է խոսքը, Աստծոն խոսքի մեջ մի քանի համար այն կողմ նկարագրությունը կրկնվում է ևս մեկ անգամ. «Վա՞յ, վա՞յ, մեծ քաղաք, բեհեզ, ծիրանի և որդան կարմիր էիր հագել, և ոսկով, ազնիվ քարերով ու նարգարիտներով զարդարվել: Որովհետև մեկ ժամում այդքան մեծությունն ավերակ դարձավ» (hh.16,17): Յովիաննսեի աքրեի առօն մի հրեշտակ պատկերավոր ձևով զուզ տվեզ, թե

ինչ էր լիմելու այդ համաշխարհային քաղաքի վերջը. «Եվ մի զորավոր հրեշտակ մեծ ջրաղացքարի պես մի քար վերցրեց ու ծովը գտեց՝ ասելով. «Բարելոն մեծ քաղաքն այսպես ուժգին վայր կցվի ու այլս չի գտնվի» (հ. 21):

Աղոթեն Յիհան Կտակարանում գտնում ենք այդ քաղաքի նկարագրությունը: Բոլորը լսել են Բարելոնի աշտարակաշինության մասին: «Բար- Էլ» նշանակում է «Աստծո Դարպասը»: Նախկին Բարելը դարձրին Բարելոն, այսինքն՝ «Խառնաշփոթություն», որ մինչև Երկինք է հասնում: Երեմիա մարգարեն նրա կործանումը տեսնում էր որպես արդեն կատարված փաստ. «Բարելոն Տերոջը ձեռքին մեջ բոլոր Երկիրը գինովցնող ոսկի գավաթ մը Եղաւ. անոր գինին ազգերը խմեցին. ասոր համար ազգերը յիմարացան» (Երեմ.51:7): Կեղծ Վարդապետությունները հոգևոր իմաստով այնպիսի ազդեցություն են ունենում, ինչպես Երկրային իմաստով՝ ոգելից խմիչքները. մարդիկ կորցնում են կողմնորոշումը, այլևս չեն իմանում, թե ինչ են անում, ինչին են հավատում կամ ինչ են ասում: Այդպիսին է այսօրվա քրիստոնեության հոգևոր վիճակը: Բոլորը խմել են Բարելոնի գավաթը և իրենց սեփական մտքերը խառնել են խոսքի հետ:

Երեմիան գրում է ութերորդ համարում. «Բարելոն յանկարծ ինկաւ, կոստրեցաւ, անոր վիայ ողբացէք. անոր վերցին համար բալասան առէք, թերեւս բժշկութիւն գտնէ»: Ինչպես հաջորդ համարում կտեսնենք՝ բժշկություն կա միայն Բարելոնից դուրս Եկողների համար, բայց ոչ Բարելոնի. «Բարելոնին դեղ դրինք, բայց բժշկութիւն չգտաւ: Զանիկա թողուց՚ք ու մեզմէ իրաքանչիւրը իր Երկիրը թող Երթայ. վասն զի անոր դատաստանը մինչեւ Երկինք հասաւ ու մինչեւ ամպերը Ելաւ» (հ.9):

Հայտն.16:19 համարում նույնական նկարագրված է այս քաղաքի դատապարտությունը. «Եվ մեծ քաղաքը Երեք կտոր Եղավ, և ազգերի քաղաքները վայր ընկան, և մեծ Բարելոնը իշշվեց Աստծո առաջ, որ Իր ցասման թունդ գինու բաժակը նրան տա»: Նայելով այդ պոռնիկ կնոքը՝ մենք տեսանք, որ նա իր ձեռքում պահում է ոչ սուրբգրային, դատապարտելի վարդապետությունների գավաթը, որից ըստ Հայտնության գրի 18:3 համարի, ողջ մարդկությունը խմել էր: Բայց դատաստանի օրը Աստծո բարկության գավաթը կտրվի նրան. «Ուրախ Եղե՛ք նրա վրա, Երկի՞նք և սու՛րբ առաջյաներ ու մարգարեներ, որովհետև Աստված ձեր դատաստանն արեց դրա դեմ» (Հայտն.18:20):

Այդ հաստատությունը, որն իր կրոնական իշխանությունը տնտեսական և քաղաքական իշխանության հետ գործադրում է Երկրի քագավորների վրա, կոչնչացվի Երկրի վիա Աստծո Թագավորության հաստատման ժամանակ: Հայտն.18:2 համարում գրված է, որ զորավոր հրեշտակը բարձրածայն աղաղակեց. «Ընկա՞վ, ընկա՞վ մեծ Բարելոնը ու դևերի ընակավայր դարձավ, ամեն պիոց հոգու արգելանց և ամեն անսուրը և ատելի թռչնի վանդակ: Որովհետև նրա պոռնկության թունդ գինուց թոլոր ազգերը խմեցին, և Երկրի քագաւորները նրա հետ խառնակվեցին, ու Երկրի վաճառականները նրա գեխությունից հարստացան»:

Ցնցող է տեսնել, թե ինչպես է Սուրբ Հոգին ներշնչել մարգարեներին և առաքյալներին և նրանց հայտնել ամեն բան այս իրադարձություններ կատարվելուց շատ առաջ: 5-րդ համարում ասվում է, որ նրա մեղքերը մինչև երկինք հասան: Իսկ 7-րդ համարում գրված է. «Եվ որքան որ իրեն փառավորեց ու զեխացավ, այնքան տանջանք ու սուգ տվեք դրան, որովհետև նա իր սրտում ասում է. "Թագուիի եմ նստած, այրի չեմ ու բնաւ սուգ չեմ տեսնի": Դրա համար մեկ օրում դրա վրա կգան իր հարվածները՝ մահ, սուգ և սով, և կրակով կայրվի, որովհետև զորավոր է Տեր Աստված՝ դրա դատաստանն անողը»:

Ամենակարող Աստված նախօրոք էր հօչակել դատաստանը նրա դեմ: Նրա համար որպես զենք են ծառայում տասը եղջյուրները, որոնք ռումբով հանկարծակի վերջ կրնեն այդ քաղաքին: Մենք պետք է համոզված լինենք, որ զալիս է այն ժամը, որում այդ հայտարարությունը կկատարվի, որովհետև Աստված ասում է այն, ինչ մտածում է, և մտածում է այն, ինչ ասում է: Ահա թե ինչու բոլոր նրանք, ովքեր ուզում են խուսափել կորստից, պետք է հանգադությանը հետևեն այն Զայնին, որն ասում է երկնքից. «Դրամից դուրս եկեք, ով ին ժողովուրդ, որպեսզի դրա մեղքերին մասնակից չլինեք ու դրա պատուհասից չընդունեք» (Յայտն.18:4):

Մենք պետք է Ռուսաստանը դիտենք որպես Աստծոն դատաստանների գործիք: Մուրճի և մանգաղի խորհրդանիշը խկապես լավագույն ձևով է ընտրված: Կլինի երեք հարձակում: Վերջին երկուսը հաստատված են Սուրբ Գրքում: Առաջինը կկատարվի Միացյալ Նահանգների դեմ, երկրորդը՝ Վատիկանի, երրորդը՝ Իսրայելի: Ուզմական մարտավարության տեսանկյունից Միացյալ Նահանգների դեմ հարձակումը անխուսափելի կլինի: Քանի որ Միացյալ Նահանգները կանգնած է Իսրայելի կողքին, մի պահ պայքարից դուրս կմղվի, որպեսզի չկարողանա միջամտել, երբ հակառակորդ ուժերը հարձակվեն Իսրայելի վրա: Ռուսաստանը կմիանա բոլոր արաբական պետություններին և կլինի նրանց առաջնորդը Իսրայելին գրոհելու համար: Աստվածաշնչի ընթերցողների համար այս իրադարձությունը հայտնի է որպես Արմագեդոնի մեծ ճակատանարտ. «Անոնց հետ Պարսիկները, Եթովպիացիներն ու Փուդացիները, ամէնքն ալ ասպարաւոր ու սաղաւարտաւոր, նաեւ Գոմեր ու անոր բոլոր գունդերը, Թորգոնի տունը հյուսիսի ծայրերէն ու անոր բոլոր գունդերը, շատ ժողովուրդներ, քեզի հետ պիտի հանեմ: Պատրաստ եղիր եւ քեզ ու քու քովի հաւաքուած ժողովուրդը պատրաստ ու դուն անոնց պահապան եղիր: Շատ օրերէն ետքը քու զօրքերդ պիտի համրես՝ ու տարիներ յետոյ պիտի գաս այն երկին վրայ որ սուրէն ազատուած է եւ այն ժողովուրդին վրայ, որ շատ ազգերէ հաւաքուած է Իսրայելի լեռներուն վրայ, որոնք մշտնջենապես աւերակ էին. բայց անոնք ազգերէն հաւաքուելով՝ պահովութեանք պիտի բնակին: Իսկ դուն նրորիկի պէս պիտի ելլես գաս ու երկիրը ծածկելու համար ամափի պէս պիտի ըլլաք, դուն եւ քու բոլոր գունդերդ ու շատ ժողովուրդներ քեզի հետ» (Եգեկ.38:5-9):

Բայց այդ ժամանակ կմիջանտի Աստված և մեկ հարվածով ամեն ինչին վերջ կդնի. «Զայն ժանտախտով ու արիւնով պիտի դատեմ եւ անոր վրայ ու անոր զօրքերուն գունդերուն վրայ ու անոր հետ եղող ժողովուրդներուն վրայ յորդահոս անձուն ու կարկուտի քարեր, կրակ ու ծծունք պիտի տեղան: Եւ շատ ազգերու առջեւ պիտի փառաւորուիմ ու սրբուիմ եւ ճանչցուիմ ու պիտի գիտնան թէ Ե'ս եմ Տէրը»: (Եղեկ.38:22,23):

Չաք.14:12 համարում կարդում ենք. «Այս պիտի ըլլայ այն հարուածը, որով Տէրը պիտի զարնէ այն բոլոր ժողովուրդները, որոնք երուսաղէմին դէմ պատերազմնեցան: Ոտքի վրայ կայնած ատենանին անոնց մարմինը պիտի հալին, անոնց լեզուն անոնց բերնի մէջ պիտի հալի»: Այս Վճռական ժամակատամարտը կլինի Հայտնության գրքի դատաստամների ժամանակ: Դա տեղի է ուժենում այն ժամանակ, եթե վեցերորդ հրեշտակը թափում է Աստծո բարկության գավաթը (Յայտն.16:12-16): Այն ժամանակ կկատարվեն այս խոսքերը. «Այն թագաւորներուն օրերը երկնքի Աստուածը ուրիշ թագաւորութիւն նը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի չաւերուի» (Դաճ.2:44): Կախճանաբանական իրադարձությունների ժամանակ կկատարվի նաև այս գրվածը. «Որովհետև Տէրն արդարութեամբ մի կարծ ու համառոտ բան կանի. Տէրը երկրի վրա մի վճռական բան կանի» (Հոռմ.9:28):

ԵՐԿՈՒ ԵՂՋՅՈՒՐ ՈՒՆԵՑՈՂ ԳԱԶԱՍԸ

Հայտնության գրքի 13-րդ գլխում խոսվում է նաև երկրորդ գագանի մասին: Հովհաննեսը գրում է սրա վերաբերյալ. «Եվ ես երկրից դուրս եկող մի ուրիշ գազան տեսա. նա երկու եղջյուր ուներ գառան նման, բայց խոսում էր վիշապի պես» (Ի.11): Այս գագանը դուրս չի գալիս ժողովուրդների ծովից, այլ երկրից, այսինքն՝ չի գալիս հօռմեական կայսրության պետություններից, ինչպես շուտով կտեսնենք, այլ հյուսիսամերիկյան մայրցանաբից, որտեղ այն ժամանակ ժողովուրդների զանգվածներ չկային:

Արտաքինից գագանը նման էր գառնուկի, բայց խոսում էր վիշապի նման: Որպես երկրորդ իշխանություն գագանը անձնավորում է Ամերիկայի Միացյալ Նահանգները իր վերջնական փուլում, արդեն նկարագրված «Միավորված Եվրոպայի» կողմին: Գագանն ուներ երկու եղջյուր, որոնք ցույց են տալիս աշխարհիկ և կրոնական իշխանությունները: Մեկը մտնում է ՄԱԿ, մյուսը՝ Եկեղեցների Համաշխարհային խորհուրդ:

Ամերիկայի Միացյալ Նահանգները, որը կառուցվել էր բողոքական սկզբունքների վրա, դարձավ հզոր տերություն: Նախ, շատ մարդիկ Եվրոպայից փախան Հռոմի կաթոլիկ Եկեղեցու հալածանքի պատճառով: Համընդիանուր արտագաղթը սկսվեց ավելի ուշ: Մարդիկ, ովքեր կարողացել էին փախչել կաթոլիկ Եկեղեցու մահացու հալածանքներից, ապաստան գտան նոր մայրցանաբում: Միացյալ Նահանգների հայրերը՝ իմնադիրները, հավատացյալներ էին, աստվածավախ մարդիկ, որոնք

ազգին տվել են այս ասույթները՝ «One nation under God»՝ «Մեկ ազգ՝ Աստծոն ներքո», «In God we trust»՝ «Մենք Աստծուն ենք վստահում»:

11-րդ համարի վերջում ասվում է, որ Երկու եղջյուր ունեցող գազանը խոսում էր վիշապի ննան, այսինքն՝ խոսում էր Յօնամի լեզվով: Յաջորդ համարն ասում է, որ այս մեծ տերությունը կիսունարհիվ Յօնամի համաշխարհային իշխանությանը և կծառայի նրան. «Եվ առաջին գազանի ողջ իշխանությունը գործադրում էր նրա առջև ու այնպես էր անում, որ Երկիրն ու նրա վրա բնակվողները Երկրպագեն այն առաջին գազանին, որի մահացու վերը լավացել էր» (Յայտն.13:12):

Մենք կարդացինք, որ այս Երկրորդ գազանը ստիպում է ողջ Երկրին Երկրպագել առաջին գազանին, այսինքն՝ ընդունել առաջին գազանի թե՛ հոգեւոր, թե՛ աշխարհիկ իշխանությունը: 1984 թվականի հունվարի տասին ԱՄՆ-ի և Վատիկանի միջև հաստատված լիակատար դիվանագիտական հարաբերությունների միջոցով ազդեցության ոլորտն ապահովված է: Այսպիսով՝ ամեն կերպ կարող են օգտագործվել թե՛ քաղաքական, թե՛ կրոնական ուղիները: Ներկա զարգացումները հստակորեն ապացուցում են, որ շատ մոտ ապագայում բողոքականները նույնպես բացահայտ կերպով կընդունեն Պապի գերազանցությունը:

Յայտնության գրքի 13-րդ գլուխ 13-րդ համարը շատ ուսուցողական է, «Եվ մեծ նշաններ էր անում. Երկնքից Երկրի վրա, մարդկանց առջև կրակ էլ էր վայր բերել տալիս»: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեխնիկայի աներևակայելի առաջընթացը գրեթե հրաշք է: Կրակի հեղեղը, որ պատերազմի վերջին օրերին թափվեց Գերմանիայի, Յեռավոր Արևելքում ճապոնիայի վրա, միայն թույլ կանխավայելումն է այն բանի, ինչ կատարվելու է մոտ ապագայում:

ԳԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այժմ հանդիպում ենք նոր հասկացության, այսինքն՝ «գազանի պատկերին»: Երկրորդ գազանի մասին ասվում է. «Եվ Երկրի վրա բնակվողներին մոլորեցնում էր այն նշաններով, որ նրա ծեռքն էին տրվել, որպեսզի գազանի առաջ գործեր՝ Երկրի բնակչիներին ասելով, որ այն գազանի պատկերը պատրաստեին, որ սրի վերը ուներ ու ապրեց» (Յայտն. 13:14): Սա արդեն քննարկված իրադարձությունների հրաշալի նկարագրությունն է: Միայնալ Նահանգներն արտոնյալ դիրք է գրավում ռազմական դաշինքում. նրա խոսքերն ու ազդեցությունը կշիռ ունեն: Յոգենոր ոլորտում գործը չի հասնի դրան, որ կարողանան մասնատել բողոքական Եկեղեցիները կատարյալ միավորնան համար. Նրանք կընդունեն պապությանը և դրանով կպաշտպանեն իրենց գոյության հրավունքը և կընդունվեն պապության կողմից:

Գազանի պատկերը կրոնական իշխանությունը խորհրդանշող եղջյուրի միջոցով ներկայացնում է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, որը

բոլոր բողոքական հարաճվանությունների միությունն է: Աստվածաշնչյան մարգարեւություններում այն ներկայացված է որպես առաջին գազանի գույզը: Երկու եղջյուրները ներկայացնում են մի կողմից կրոնական, մյուս կողմից՝ քաղաքական իշխանությունը: Ինչպես արևելքի և արևմուտքի երկրները պատկանում են ՄԱԿ-ին, այնպես էլ արևելքի և արևմուտքի բողոքական եկեղեցիները միավորվում են եկեղեցիների համաշխարհային խորհրդում: Թե՛ մեկը, թե՛ մյուսը քաղաքական իշխանություն են գործադրում: Եթե չիներ եկեղեցու և պետության միությունը, չին լինի ո՛չ եկեղեցական պետություններ, ո՛չ էլ պետական եկեղեցիներ: Այդ եկեղեցին աշխարհիկ իշխանության միջոցով է դարձել այն, ինչ կա: Եկեղեցիների համաշխարհային խորհրդու նույնպես ավելի ու ավելի է վերածվում քաղաքական իշխանության գործիքի: Նրա նախագահը կարող է նույնիսկ հունգարացի լինել, որը միաժամանակ կարող է լինել Բուդապեշտի աթեստական կառավարության անդամ:

Այսափառ պատկերը կկարողանա նաև խոսել, այսինքն՝ բանակցություններին մասնակցելու իրավունք կունենա: Այդ մասին գրված է 15-րդ համարում. «Եվ նրան իշխանություն տրվեց, որ գազանի պատկերին հոգի տա, որպեսզի պատկերը խոսի էլ ու անի էլ, որ ովքեր գազանի պատկերին չերկրագեն, սպանվեն»: Նա, ով որպես Քրիստոսին հավատացող չի ուզում հնազանդվել եկեղեցիների համաշխարհային խորհրդի պահանջներին և խորհրդին պատկանող ոչ մի հարաճվանության անդամ չէ, պետք է ակնկալի հալածանքներ: Աստվածաշնչին հավատացող մարդիկ կնորոշնեն հավաքույթներ անցկացնելու և հոգևոր գործերով զբաղվելու իրենց իրավունքը: Գազանի պատկերը կսկսի խոսել և մոլեռանդությանք ջանք կանի, որ սպանվեն բոլոր նրանք, ովքեր չեն մասնակցում իր հետ և չեն երկրագում առաջին իշխանությանը: Երբ գազանի պատկերը՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդու, սկսի խոսել, ճնշում և բռնություն կգործադրվի բոլոր ծշմարիտ աստվածաշնչային հավատացյալների վրա:

Դա մեզ հիշեցնում է Նաբուգոնոսորին, որը ուսկե արձան պատրաստել տվեց: Բոլորին իրամայվեց երկրագել այդ արձանին: Բայց ինչպես այն ժամանակ, այնպես էլ իհմա, կան մարդիկ, ովքեր չեն ուզում Աստծուց բացի մեկ ուրիշին երկրագել, ովքեր չեն ուզենա խոնարիվել ոչ մի կրոնական պատկերի, մարդկային գործի առջև և երկրագել դրանց: Յեթանոս թագավորների իշխանությունը սկսվեց աստվածավախ մարդկանց հալածանքով և այդպես էլ կվերջանա: «Սանե, Սանե, Թեկեղ Ու Փարսին» գրությունն արդեն պատի վրա է: Փորձության մեջ պետք է երևա ծշմարիտ, աստվածաշնչային հավատացյալների տոկունությունը:

Ինչպես կարդում ենք Դայտնության գրքի 13-րդ գլուխ 5-8 համարներում՝ առաջին գազանը ներկայացված է նաև որպես անձնավորություն. «Նրան կերկրագեն երկրի վրա բոլոր բնակվողները, որոնց անունները գրված չեն Գառան կյանքի գրքում, որ աշխարհի սկզբից իսկ մորթված է» (հ.8): Միջնադարում եկեղեցու տոտալիտար իշխանության գործադրումը հայտնի

է բոլորին. Յօռմի պապերի պատմությունը նույնպես ծանոթ է շատերին, բայց վերջում Եկեղեցին այնպիսի իշխանություն կունենա, ինչպիսին երեք չի ունեցել և վերջ կղմի կրոնի ազատությանը: Միայն նա, ով կընդունի նրան, կընդունի նրա կողմից:

Նույն կերպ, նրա պատկերը՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդում» միավորված բողոքականների միությունը, կխոսի իշխանական ձայնով: Նրանք կնախընտրեին չեղյալ հայտարարել Ռեֆորմացիան և հասուցել դրա բերած «վճասները»: Այդպես անելով կիավատան, թե գործում են բարեփոխիչների հոգով, որովհետև իբր թե նրանք չեն ցանկացել բաժանվել մայր-Եկեղեցուց: Ի վերջո, նա, ով չի ցանկանա միանալ միաբանության համար արվող ջանքերին, և չի ընդունի Յօռմի Եկեղեցին, պետք է սպասի ամեն ինչի: Բոլոր դրսում գտնվողների կամքը պետք է ենթարկվի նրանց: Թող սա ասվի Տիրոջ Անունով. այդ միաբանությունը, բոլորովին էլ Յիսուս Քրիստոսի Եկեղեցու միաբանությունը չի, որի համար նա աղոթել է քահանայապետական աղոթքում:

Այնպես կլինի, որ ով որ ինչ-որ բան ասի Յօռմի Եկեղեցու դեմ, կպատճի: Միայն մեկ ձայն իշխանություն կունենա երկրի վրա. ցանկացած ուրիշ ձայն կարգելի, և մարդկանց կատիպեն ճանաչել այդ ձայնը և դառնալ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին պատկանող որևէ հարանվանության անդամ: Նա, ով չի ենթարկվի այս երկու համակարգերին, կմնա առանց իրավունքների:

ԳԱԶԱՆԻ ԴՐՈՇՍԸ

Յայտնության գրքի 13:16 համարում ասվում է. «Եվ նա (երկրորդ գագանը) ստիպում էր բոլորին՝ փոքրերին ու մեծամեծներին, հարուստներին ու աղքատներին, ազատներին ու ծառաներին, որ դրոշմ դնի նրանց աջ ձեռքին կամ ճակատին»: Այստեղ նույնպես գործ ունենք Աստվածաշնչի խորհրդանշական լեզվի հետ: Դրոշմը տարբերակիչ նշան է, նշանակ: Պողոսն ասում է. «Սրանից հետո թող մեկն ինձ չանհանգտացնի, որովհետև իմ մարմնի վրա ես Տեր Յիսուսի վերջի նշաններն եմ կրում» (Գաղատ.6:17): Նա չարչարվել է Քրիստոսի և Ավետարանի ճշմարիտ քարոզչության համար: Նա հաղորդ է եղել Նրա չարչարանքներին: Անշուշտ, Յիսուսի վերջի նշանները նա արտաքնապես և տեսանելի ձևով չէր կրում: Իրականում դա կլիներ սատանայի ծաղրանքը մեր Տեր Յիսուս Քրիստոսի միջոցով Աստծո փրկության սուրբ գործի հանդեպ, որը կատարվել է միայն մեկ անգամ և չի կարող նմանակվել: Պողոսը ճանաչված էր որպես Քրիստոսի սպասավոր և կրել է Նրա նախատինքը:

ճակատի վրա դրոշմը ցույց է տալիս ընդունված որոշումը, իսկ ձեռքի վրայինը՝ համապատասխան գործողությունը: Գլուխը ցույց է տալիս

հակաքրիստոսի հետ համաձայնությունը, իսկ ձեռքը՝ հակաքրիստոսի համակարգին մասնակցությունը:

Աստվածաշնչային հավատացյալների շրջանում մարդիկ անհանգստանում են գաղանի դրոշմի վերաբերյալ հարցերով, բայց չեն գիտակցում, որ մարդկային ծևով կազմակերպված ցանկացած քրիստոնեական հարանվանություն արդեն կրում է այդ դրոշմը: Աստված երեք չի հիմնել երկրային կառավարում ունեցող ոչ մի հաստատություն: Նա կյանքի է կոչել մի կենդանի օրգանիզմ: Սկզբնական քրիստոնեության աստվածաշնչյան եկեղեցիները եղել են հավատացյալների ազատ, ինքնուրույն, տեղական համայնքներ, որոնք գոյություն ունեին որպես անկախ, տեղական եկեղեցիներ: Այն ժամանակներում եկեղեցիներն առաջնորդվում էին Սուլք Հոգուց լիազորություն և հանձնարարություն ստացած մարդկանց կողմից, որոնցից յուրաքանչյուրն ուներ աստվածային կոչում և ուղարկված էին կատարելու իրենց առանձնահատուկ ծառայությունը, ինչպես որ Աստված էր հաստատել եկեղեցում (1 Կորնթ. 12:28, Եփես. 4:11): Զկար ո՞չ մի գլխավոր շտաբ, ո՞չ մի վերադաս, որին պետք էր դիմել, ոչ էլ կային նրա կողմից նշանակված հեղինակավոր ուսուցիչներ, չկային ո՞չ աստվածաշնչյան դպրոցներ, ո՞չ քարոզիչներ պատրաստող ճեմարաններ կամ նման բաններ: Ըստ էության այն ժամանակ չկար ոչ մի այնպիսի բան, որն այսօրվա քրիստոնեության մեջ թվում է ինքնին հասկանալի և, հակառակը, այսօր կազմակերպված և անկախ եկեղեցիներում ոչինչ չի մնացել սկզբնական քրիստոնեության մաքուր վարդապետությունից և գործերից: Մնացել է միայն մեռած ձևը:

Այսօր հավատացյալների ամենափոքր համայնքն անգամ կառչած է մնում իր իսկ հաստատած ուղղությունից. միայն նրանք, ովքեր պատկանում են նույն կազմակերպությանը, կարող են այնտեղ ծառայել որպես քարոզիչ: Բողոքական եկեղեցիներն իրավացիորեն վիճարկել են կարոլիկ եկեղեցու այն հավակնությունը, թե իրենից դուրս փրկություն չկա: Բայց մանրամասն քննելուց հետո նույն հավակնությունը գտնում ենք բոլոր հարանվանություններում, մինչև ամենափոքր խմբերը: Բարձրաձայն, թե ցածրաձայն բոլորն ասում են, որ եթե չեն հավատում իրենց վարդապետությանը, իրենց գիտությանը, իրենց հայտնությանը և այլն ... չեն կարող փրկվել: Նրանք այդպիսով նույնանում են առաջին կազմակերպված քրիստոնեական կրոնի նշանի հետ, եթե նույնիսկ վարդապետական հարցերում տարբերվում են: Այդ նշանը բավական է ավտոմատ կերպով գազանի դրոշմը ընդունելու և հակաքրիստոսի հոգուն ենթարկվելու համար: Յակաքրիստոսի հոգին իշխում է ամեն տեղ, ուր մարդիկ կապված են որևէ կազմակերպության, վարդապետության կամ անձնավորության հետ: Դա նշանակում է, որ բոլոր պետական և անկախ եկեղեցիները, մինչև ամենափոքր շարժումն ու նոր կազմակերպությունը, արդեն կրում են գաղանի դրոշմը, առանց այդ իմանալու:

ԽՈՐՅՈՂԱՎՈՐ ԹԻՎԸ

Ինչպես արդեն նշեցինք՝ գազանի դրոշմը չընդունող մարդկանց համար մեծ նեղության ժամանակներ կզան: Դոգլոր ոլորտում հակաքրիստոսի համակարգին չմիացողները հալածանքներ կկրեն: Տնտեսական ոլորտում դա նշանակում է, որ բոլորը պետք է ենթարկվեն համաշխարհային տնտեսության այդ համակարգին: Ով չի ուզենա մասնակցել դրան, բոյկոտի կենթարկվի և դուրս կմղվի առևտորից: Այդ մասին ենք կարդում Հայտն.13:17 համարում. «Որպեսզի ոչ ոք չկարողանա գնել կամ վաճառել, բացի նրանից ով գազանի դրոշմը կամ նրա անունը կամ նրա անվան համարն ունի»:

Այն փաստից, որ խոսվում է ոչ միայն «գնելու», այլև «վաճառելու» մասին, երևում է, որ դա վերաբերում է ոչ միայն սովորական քաղաքացիներին, ովքեր գնում են մթերք և այլն, այլև գնող և վաճառողներին, այսինքն՝ առևտորվ գրադպողներին: Ուրեմն խոսքը ոչ միայն հավատացյալ տանտիրուհու մասին է, որը ոչինչ չի վաճառում, այլ միայն գնում է անհրաժեշտ ապրանքները: Մրա իմաստը լիովին հստակ է. առևտորի ողջ աշխարհը պետք է ենթարկվի Հռոմի պայմանագրին: Նշնարիտ քրիստոնյաները վնասներ և դժվարություններ կկրեն, անկախ նրանից գնում են, թե վաճառում, որովհետև չեն ցանկանա մասնակցել հակաքրիստոսի համակարգին: Ինչպես արդեն տեսանք, մենք պետք է ճանաչենք այս երեք բաները՝ գազանի դրոշմը, նրա անունը և անվան թիվը: Ինչ վերաբերում է գազանի դրոշմին, դա արտաքին, տեսանելի նշան չէ, այլ նրա անունը և անվան համարը: Գրված է և՝ անվան, և՝ անվան համարի մասին, բայց երկուսն էլ մտնում են նույն համակարգի մեջ: Հաջորդ համարը մեզ ավելի շատ տեղեկություններ է տալիս. «Իմաստությունն այստեղ է, ով որ միտք ունի, թող հաշվի գազանի թիվը, որ մարդու թիվ է, և նրա թիվը վեց հարյուր վաթսունվեց է» (Հայտն.13:18): Այժմ ավելի ենք մոտենում գործին:

Այսպիսով անվան համարը վերաբերում է մի մարդու: Այդ թիվը հաշվելու համար անհրաժեշտ է իմանալ, թե որտեղ է գտնվում այդ կրոնական իշխանությունը, և ինչպես է կոչվում նրա ներկայացուցիչը: Նկատենք, որ այստեղ այս մարդը նույնացվում է գազանի հետ: Խոսքը նույն խորհրդավոր մարդու մասին է, որին նկարագրել է Պողոսը:

Այլև պետք չէ հանելով դարձնել այդ մարդուն: Ողջ նկարագրությունը, ինչպես նաև թվային արժեքը միայն մեկ նշանակություն ունեն, և խոսքը միայն մեկ մարդու մասին է: Միայն մեկն է կրում լատինական այն անվանումը, որի թվային արժեքը 666 է: Այն սխալ կարծիքը, թե իբր արաբական թիվն ինքնին հակաքրիստոսի նշանն է և մի համակարգի ներմուծումը, որը գործում է համակարգչի կամ ուրիշ տեխնիկական գյուտի միջոցով, ոչ մի սուլթանային հինք չունի: Մինչդեռ բարացիորեն ասվում է, որ դա մի մարդու թիվ է, որը պետք է հաշվել: Այդ պատճառով դա չի կարող լինել պարզապես 666 թիվը, այլ թվային արժեքը, որը ստացվում է այն մարդու անվանումից, որին խսկապես նկատի ունի Սուլր Գիրքը:

Ամեն բացատրություն, որ հակասում է Սուրբ Գրքի այս հստակ վկայությանը, միայն հնարանք է: Յուրաքանչյուր սեփական մեկնություն ոչ միայն մոլորեցնում է մարդկանց, այլև նրանց խուճապահար է անուն, որովհետև նրանց վախեցնում են՝ ասելով, որ ներմուծվելու է նոր միջազգային դրամական համակարգ, որում ծածկագիրը 666 թիվն է: Դա բոլորովին կապ չունի այն բանի հետ, ինչի մասին խոսում ենք այստեղ:

Նաև աննտություն է հակաքրիստոսի 666 թիվը տեսնել վարկային քարտերի, բանկի ծածկագրային համարների, ապրանքների պիտակների, հեռախոսահամարների, ծառայողական թերթիկների, ավտոմեքենաների համարանշների և այլ բաների վրա: Ոմանք խոսում են յոյո-Յորքուն, մյուսները՝ Քրյուսելում եղած համակարգիշների մասին, որոնք իբր թե ունեն 666 թիվը: Ինչպիսի՞ կուրություն և մոլորություն: Համակարգիչը պարզապես համակարգիչ է, վարկային քարտն ընդամենը անկանխիկ վճարման ձև է: Միջազգային դրամական համակարգը և համաշխարհային բանկը հաստատություններ են, որոնք կարգավորում են միջազգային վճարումները:

Նոյն կերպ, այն տեսությունը, ըստ որի գաղանի դրոշմը անտեսանելի անհատական ծածկագիր է, որը պետք է դաշվի լազերային ճառագայթով, արյունը է որոշ հավատացյալների չափազանց հարուստ երևակայության: Բոլոր այս բաները և ուրիշ շատ բաներ հնարված են և ոչ մի ընդհանուր բան չունեն իրականության հետ: Ով այդպիսի բաներ գրում է, հավատում և տարածում, նա չունի Աստծո Տոփին և զոհն է դարձել սատանայի խորամանկ հնարքների, որոնք մոլորեցնում և շեղում են մարդկանց: Դրա պատճառ այն է, որ մարդիկ չեն հասկացել, որ խոսքը 666 թվի մասին չէ, այլ գումարի, թվային արժեքի արյունքի, որը պետք է հաշվել ըստ գաղանի պաշտոնական անվանման:

Մենք պետք է անդրադառնանք սուրբգրային այս համարին. «Ով որ միտք ունի, թող հաշվի գաղանի թիվը, որ մարդու թիվ է, և նրա թիվը վեց հարյուր Վարսունվեց է» (Յայտն.13:18), լուրջ ընդունենք այն և ոչ թե երեխայի նման կրկնենք 666 թիվը, այլ իսկապես հաշվենք: Հաշվարկն այսպիսին է.

| V | I | C | A | R | I | V | S | F | I | L | I | I | D | E | I | |
|--------|--------|---------|--------|--------|--------|--------|--------|---------|--------|--------|--------|---------|--------|--------|-----|--|
| 5 + | 1 + | 10 0 | + . | 1 + | 5 . | . + | 1 . | +5 0 | + 1 | + 1 | + 1 | 50 0 | + 1 | = 1 | 666 | |

Աստվածաշնչի վարդապետներից շատերը մտքի լուրջ, ճակատագրական սխալ են թույլ տալիս: Նրանք խոսում են հակաքրիստոսի վարչակարգերի և շարժումների մասին, երբ խոսքը վերաբերում է աշխարհիկ հասկացություններին և ոչ քրիստոնեական քաղաքական համակարգերին, իմասպիսիք են կոմունիզմը, աթեիզմը, իսլամը և այլն:

Բնականաբար, կան կրոններ և կառավարություններ, որոնք հակառակ են քրիստոնեությանը, բայց դրանք կապ չունեն հակաքրիստոսի հետ, որի մասին մեզ պատմում է Աստվածաշունչը:

Ենք պետք է հասկանանք, որ հակաքրիստոսի հոգին գոյություն ուներ, երբ ոեն ոչ որ չէր լսել իսլամի, արեհզմի, կոմունիզմի և այլնի մասին: Նաև պետք է գիտակցենք, որ առաջալների օրերում հեթանոսական կրոններն ու կուռքերի պաշտամունքը լայն տարածում ունեին: Բայց Աստծոն մարդկանցից ոչ մեկը չասաց, որ հակաքրիստոսը դուրս կգա նրանց շարքերից. հակառակը, Յովիաննեսը շատ հստակ գրում է այն մարդկանց մասին, որոնք մոլորդել են և զնացել հակաքրիստոսի ճանապարհով. «Մեզանից դուրս եկան...» (1 Հովհ.2:19):

Ուրեմն, խոսքը մի համակարգի մասին է, որը գտնվում է քրիստոնեության ներսում, բայց իր գործերով և ուսմունքներով հակառակվում է Քրիստոսին: Խոսքն այն մարդու մասին է, որը հավակնում է լինել Քրիստոսի փոխարինող երկրի վրա և գործել Նրա փոխարեն, բայց անում է ամեն հնարավորը, որ մարդկանց խանգարի Քրիստոսին գալ: Այդ պատճառով նա չի քարոզում Քրիստոսին և միակ փրկարար շնորհը, ինչպես քարոզել են Պողոսը, Պետրոսը և նրանցից հետո եկող մարդիկ: Դրա փոխարեն նա ձգուում է մեծ իշխանությանք բոլորի ուշադրությունը հրավիրել իր և իր թիկունքում կանգնած հաստատության վրա: Նրան հավատացողները կապված են իր անձի և իր վարդապետության հետ, ոչ թե Քրիստոսի և սուրբգորային ուսմունքի ու գործերի հետ:

Վերջում կլինի միայն երկու խումբ. ոմանք կկրեն Աստծո կնիքը, մյուսները՝ զազանի դրոշմը: Եշմարիտ հավատացյալները կնքվում են երկնքից, ինչպես գրված է. «Նրանով դուք էլ հուսացիք, երբ ճշմարտության խոսքը լսեցիք՝ ձեր փրկության Ավետարանը, որին էլ երբ հավատացիք, խոստացված Սուրբ Յոգով կնքվեցիք» (Եփես. 1:13): Նա, ով մերժում է ճշմարտության խոսքը, մաքուր և լրիվ Ավետարանը, երբեք չի կարող Սուրբ Յոգով կնքվել, որովհետև հակառակվում է Աստծո Յոգում: Այդպիսի մարդկանց համար մնում են միայն կրոնական ստերն ու մոլորությունները: Նրանք կստանան հակաքրիստոսի դրոշմը:

Կնիք ստանալու միտքը հաստատում է Պողոս առաքյալը Եփես.4:30-ում. «Եւ մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Յոգուն, որով կնքվեցիք փրկության օրվա համար»: Առաքյալը գրում է հավատացյալ դարձած կորնթացիներին. «Բայց մեզ ձեզ հետ հաստատողը և մեզ օծողը Աստված է, որ մեզ կնքեց էլ ու Յոգու գրավը մեր սրտերի մեջ դրեց» (2 Կորնթ.1:21,22): Աստծո կնիքը Սուրբ Յոգու իրական ընդունումն է որպես գերբնական փորձառություն, ինչպես եղել է առաջին Եկեղեցում (Գործք 2:1-4, 8:15-17, 10: 44-48, 19:5,6): Այդպիսով Աստված Ինքն է վկայություն տալիս, որ այդ անձնաՎորությունը ընդունվել է իր կողմից: Դա ոչ մի կապ չունի կրոնական ծառայության որևէ գործողության հետ, այլ դա աստվածային հաստատումն է այն բանի, որ Աստծո հաճությունը հանգչում է Քրիստոսով հավատացյալ դարձած անձի վրա:

Ոչ ոք չի կարող լրջորեն հավատալ, որ մարդիկ ճակատին տեսանելի նշան կկրեն: Պարզապես նրանք կենթարկվեն հակաքրիստոսի համակարգին և կմասնակցեն դրան՝ ավտոմատ կերպով ստանալով հակաքրիստոսի հոգու դրոշնը, ինչպես Քրիստոսին ճշմարտապես հետևողներն են լցվում Սուլր Հոգով և կմքվում Նրանով:

Նա, ով իսկապես հետևում է Տիրոջը, այս հարցում էլ խավարում չի մնա: Սուլր Հոգին բոլորին հստակություն է շնորհում, որովհետև ժամանակը եկել է: Ինչպես արդեն նշեցինք՝ հավատքի մեջ անկեղծ եղող շատ մարդիկ գտնվում են հակաքրիստոսի համակարգում առանց այդ ինանալու, որովհետև Եկեղեցիների համաշխարհային խորհրդին պատկանող հարանվանությունների անդամ են և հետաքրքրությանք լսում են, երբ քարոզվում է հակաքրիստոսի մասին: Աստվածաշնչի մեկնաբանները հակաքրիստոսին փնտրում են Սիրիայում, Լիբիայում, նույնիսկ Խորայելում և այսպես շարունակ: Աստծուց լույս չստացած մարդիկ մոլորվում են իրենց քվացյալ ողջամտության պատճառով և մոլորեցնում են ուրիշներին: Իրենց գիտությամբ մեծ տպավորություն են թողնում անտեղյակ մարդկանց վրա, ովքեր բոլորովին չգիտեն Աստվածաշունչը: Սատանայի այս նենգ և մոլորեցնող խաղը, որը հատուկ լուսաբանում բերելու տուտ հավակնություն ունի, պետք է դադարեցնել Աստծո խոսքի հստակ լեզվով: Թող Սուլր Գրքի հետ ներդաշնակ եղող այս շարադրանքը նպաստի դրան:

ՃՇԳՐԻՑ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Որպես եզրափակում ուզում ենք քննարկել հակաքրիստոսի ևս մի քանի բնորոշ հատկություններ: Պողոսը նրան անվանում է «անօրենության» մարդ, այսինքն՝ մեկը, որ խախտում է օրենքը: Դա ոչ մի կապ չունի Մովսեսի օրենքով հաստատված պահանջների հետ, այլ Յին Կտակարանի այն մասի հետ, որը վերաբերում է փրկության պատմության հայտնությանը: Բոլորը խախտել են օրենքը և Աստծո պատվիրանները: Եթ.3:5 համարում ասվում է. «Եվ Մովսեսը հավատարիմ է Նրա ամբողջ տան մեջ որպես ծառա՝ այն ասպելիք բաներին վկա լինելու համար» : Խոսքը փրկության ծրագրի մասին է, որն ուրվագծվում է որպես ստվեր օրենքի բոլոր կարգադրությունների մեջ: Լեռան քարոզում Յիսուսն ասում է. «Մի կարծեք,թե ես եկել եմ օրենքը կամ մարգարեներին քանդելու.. ես քանդելու չեմ եկել, այլ կատարելու: Որովհետև, ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև որ երկինքն ու երկիրը անցնեն, օրենքից մի կետ անգամ կամ մի փոքր նշանագիր անգամ չի անցնի, մինչև որ ամենը չկատարվի» (Մատթ.5:17,18): Անկասկած, «կատարվի» բառը վերաբերում է մարգարեական մասին, որն արդեն Յին Կտակարանում խոսքի միջուկն էր:

Տիրոջ հարությունից հետո Նրա մասին կարդում ենք Ղուկ.24:47 համարում. «Եվ սկսելով Մովսեսից ու բոլոր մարգարեներից՝ նրանց քացատրում էր, ինչ որ գրքերի մեջ իր մասին գրված էր»: Այնուհետև

կարդում ենք 44 և 45 համարներում. «Եվ նրանց ասաց. «Մրանք այն բաներն են, որոնց մասին խոսել էի ձեզ հետ, քանի դեռ ձեզ հետ էի, թե պետք է կատարվեն Մովսեսի օրենքում, մարգարեների գրքերում ու սաղմոններում իմ մասին բոլոր գրվածները»: Այն ժամանակ նրանց միտքը բաց արեց, որ գրքերը հասկանան»:

Նոր Կտակարանում հաճախ ենք հանդիպում «Ինչպես Գիրքն է ասում» կամ «Ինչպես գրված է» և ուրիշ նման արտահայտությունների, և ամեն անգամ խոսքը Յին Կտակարանի մասին է: Երբ Յիսուսը քարոզում էր, Նոր Կտակարանի ոչ մի տող դեռ գրված չէր: Աստծո ամեն ծառա միշտ կընդգրկի Յին Կտակարանը Ավետարանի քարոզության մեջ: Պողոսի մասին ասվում է. «...շատ մարդիկ եկան նրա մոտ՝ այն իշխանատունը, որոնց ԱՍՏԾՈ ԱՐՁԱՌԱԹՅԱՆ մասին վկայությամբ պատմում էր ՄՈՎՍԵՍԻ ՕՐԵՆՔԻՑ ու ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻՑ և առավոտից մինչև երեկո ՅԻՍՈՒՍԻ մասին համոզում էր նրանց» (Գործք 28:23):

Միայն նա, ով ավետարանում է Աստծո թագավորության մասին առաքելական ձևով, կրարողի Յիսուսին և աստվածաշնչային ուսմունքները այնպես, ինչպես քարոզվել է սկզբնական քրիստոնեության մեջ: Առաջալը վկայում է Գործք 26:22 համարում. «Նրանից դուրս ոչինչ չեմ ասում, ինչ որ մարգարեներն ու Մովսեսն ասել են այն լինելիք բաների մասին»:

Երբ Պետրոսը Գործք առաքելոց գրքի 15-րդ գլխում վերջացրեց իր քարոզը, Յակոբոսը խոսք վերցրեց և ասաց. «Եղբայրնե՞ր, ինձ լսեցք: Շնավոնք պատմեց, թե Աստված ինչպես նախ այցի եկավ, որ հեթանոսներից իր անվան համար ժողովուրդ ձևավորի: Սրա հետ միաբանվում են մարգարեների խոսքերը, ինչպես որ գրված է...» (hh.13-15):

Բայց անօրենության մարդը պաշտպանում է իր սեփական աստվածաբանությունը, որը զատված է Յին Կտակարանից, և Նոր Կտակարանը մեկնաբանում է իր սեփական դատողության համաձայն:

Այդ մարդը կոչվում է նաև «կորստյան որդի»: Այս արտահայտությունը նախկինում գործածվել էր միայն մեկ մարդու համար, և դա Յուդան էր: Յովհ.17:12 համարում Յիսուսը նրա մասին ասում է. «... ու նրանցից ոչ մեկը չկորավ, բացի միայն կորստյան որդուց, որպեսզի գրվածը կատարվեր»: Ինչպես Յուդան էր վկայակոչում քրիստոսին, այնպես էլ կորստյան որդին, որը քրիստոսի գործի դավաճանն է:

Յովհ.13:2 համարում կարդում ենք. «... սատանան արդեն Սիմոնի որդի Յուդա հսկարովտացու սրտի մեջ էր դրել, որ Նրան մատնի»: Երկուսն էլ՝ թե՝ Յուդան, թե՝ հակաքրիստոսը, կապված են սատանայի հետ: «Յիսուսը նրանց պատասխանեց. «ԶԵ՞ որ Ես ձեզ՝ տասներկուսիդ ընտրեցի, և ձեզանից մեկը սատանա է» (Յովհ. 6:70): Պողոսն այս խոսքերով է նկարագրում հակաքրիստոսին վերջնական փուլում. «Նրա գալը սատանայի ներգործությունից է...» (2 Թես. 2:9): Այստեղ Պողոսը զարգացնում է այս թեման և ասում, որ սատանայի ներգործությունը դրսնորվում է ամեն տեսակ զորությամբ, սուտ նշաններով և հրաշքներով: Այս խոսքը մեզ հիշեցնում է Յայտն.16:13,14 համարներում գրվածը. «Եվ

տեսա՝ վիշապի (սատանայի) բերանից, գազանի (տիրակալի) բերանից և սուտ մարգարեի (հակաքրիստոսի) բերանից երեք պիղը հոգիներ էին դուրս գալիս՝ գորտերի նման: Որովհետև նրանք դևերի ոգիներ են, որ նշաններ են անում. գնում են երկրի և բովանդակ տիեզերքի թագավորների մոտ, որպեսզի նրանց հավաքեն Ամենակալ Աստծո այն մեջ օրվա պատերազմի համար»: Այս պատերազմը տեղի կունենա Աստծո թագավորության հաստատումից անմիջապես առաջ:

Հակաքրիստոսը կարող է ստանձնել իրեն հանձնված դերը միայն այն ժամանակ, եթե վերցվի իրեն արգելողը: Հստակորեն երևում է, որ խոսքը Սուրբ Հոգու մասին է, Որը կենդանի Աստծո աստվածային զորությունն է և Եկեղեցում հակառակվում է հակաքրիստոսին: Հենց որ Հարս-Եկեղեցին հափշտակվի, ճանապարհն ազատ կիմի հակաքրիստոսի համար: Բայց երբ Հիսուսը գա Հազարամյա թագավորությունը հաստատելու, կսպանի նրան իր բերանի հոգով (2 Թես.2:8): Այդ մասին մարգարեացել է Եային 11-րդ գլուխ 4-րդ համարում. «... իր բերանի գաւազանովը երկիրը պիտի զարմէ ու իր շրջունքներուն հոգիովը ամբարիշտը պիտի մեռցնէ»:

Վերջուն մոտենում ենք հակաքրիստոսի ամենակարևոր հատկանիշին, որը պետք է առանձնահատուկ կերպով քննեն նրանք, ովքեր ուզում են փրկվել:

Հիսուսի սիրելի աշակերտը հետևյալ հարցն է տալիս 1 Հովի.2:22 համարում. «Ո՞վ է ստախոսը ...»: Նա անմիջապես պատասխանում է այդ հարցին կոնկրետ կերպով. «...եթե ոչ նա, ով ուրանում է, թե Հիսուսը չէ Քրիստոսը: Նա նեռն է, որ ուրանում է Հորը և Որդուն»:

Նա, ով ժխտում է, որ միակ Աստված որպես Հայր բացահայտվեց Որդու մեջ (Հովի.14:7), ընկել է ների (հակաքրիստոսի) ամենամեծ մոլորության մեջ: Աստված Հոգի է (Հովի. 4:24). Նա հավիտենական է, այսինքն՝ սահմանափակված չէ ո՛չ ժամանակով, ո՛չ տարածությամբ, ոչ էլ որևէ չափվող բանով, որովհետև Նա անսահման է: Մեկ լինելով հանդերձ՝ Նա շատ հայտնություններ ունի: Նա ամեն բանի սկզբնական Աղբյուրն է: Նախ և առաջ Նա իր հոգևոր անսահմանությունից դուրս եկավ և հայտնվեց հոգևոր ընկալելի կերպարանքով՝ թեոփանիայով, որպեսզի մարդիկ կարողանան Նրան հասկանալ և սիրել իրենց հասկանալի ձևով: Նա այդպես եկավ մարդկանց մոտ Եղենի պարտեզում և այդպես հայտնվեց Հին Կտակարանի ժամանակաշրջանում:

Բայց Նա ուզում էր, որ մարդիկ նորից ստանան իր պատկերը, այսինքն՝ անապականության վիճակը: Ահա թե ինչու նախ ինքը պետք է նրանց նմանվեր: Նա կանուր հաստատեց անըմբռնելի հավիտենության և ըմբռնելի ժամանակի միջև: Այսպես Նա հայտնվեց մարդու կերպարանքով: Հոգևոր մարմնից անցավ մարմնավոր մարմնի մեջ:

Ահա թե ինչու Հիսուսն այլ անձ չէ, քան ինքն Աստված: Նրանում էր բնակվում Աստվածության ողջ լիությունը մարմնապես, ոչ թե Աստվածության մեկ երրորդ մասը, այլ ողջ լիությունը (Կողոս.2:9): Այն, ինչ նա ասել է այն ժամանակ, ուժի մեջ է նաև այսօր. «Ինձ տեսնողը Հորը

տեսավ...» (Հովհ.14:9): Նա ենմանուելն է, այսինքն՝ «Աստված մեզ հետ» (Մատթ.1:23):

Հակաքրիստոսի հոգին ժխտում է սա և մեկ Աստծում դարձնում իրարից տարբեր մի քանի անձ, որոնք, իբր թե հավիտենությունից ի վեր գոյություն ունեն կողը-կողի: Այդ վարդապետության հետևանքն այն եղավ, որ միաստվածությունը վերածեցին բազմաստվածության: Սրա մեջ է հակաքրիստոսի ազդեցությունը, որն ուղղված է անմիջապես Քրիստոսի դեմ:

Որպես քրիստոնյա, իրեա և առաջյալ՝ Պողոսը գրում է Քրիստոսի մասին. «...Որը բոլորի վրա Աստված է հավիտյան օրինյալ. ամեն» (Հովոն. 9:5բ) Տերը նույն քանի է ասել թե՛ Յին, թե՛ Նոր Կտակարաններում. «Լսի՛ր, իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է» (Մարկ.12:29-32 և 2 Օրին.6:4): Քանի որ մարդկությունը կորսված էր, անհրաժեշտ էր Փրկիչ: Ես.43:10-12 համարներում Տերն ասում է. «... Ինձնէ առաջ Աստուած չեղաւ ու Ինձնէ Ետքն ալ պիտի ջըլլայ: Տերը Ե՛ս եմ, Ե՛ս եմ եւ Ինձնէ ուրիշ Փրկիչ չկայ... ու Իմ վկաներս դու՛ք եք, կ'ըսէ Տերը, որ Ե՛ս եմ Աստուած»: Աստծո բոլոր որդիների և դուստրերի համար Աստծո որդեգրումը ստանալը հնարավոր դարձավ միայն այն պատճառով, որ Աստված ծնվեց որպես մանուկ և եկավ այս երկիր որպես Որդի: Արդեն Յին Կտակարանում գրված է Որդու մասին. «Վասն զի մեզի Մանուկ մը ծնաւ, մեզի Որդի մը տրուեցաւ եւ իշխանութիւնը Անոր ուսին վրայ պիտի ջըլլայ: Անոր անունը պիտի կոչուի Սքամչելի, Խորհրդակից, Յզօր Աստուած, Յալիտենականութեան Յայր, Խաղաղութեան Իշխան» (Ես.9:6):

Թեև Աստված որպես Յայր բացահայտվեց Որդու մեջ, Աստվածաշունչը միշտ խոսում է միայն մեկ Աստծո մասին. այն երեք չի խոսել երկու կամ երեք Աստվածների մասին: Աստվածաշնչում երեք չենք հանդիպում «Եռանձնյա Աստված», «Եռամեկ Աստված», «Յավիտենական Որդի» և ուրիշ նման արտահայտությունների: Երրորդության վարդապետությունը չի հիմնվել մարգարեների և առաջյաների կողմից. դա հակաքրիստոսի հոգու արգասիքն է, որը աղավաղել է Աստվածության իմաստը: Պողոսի գրածը պետք է բացի ամենքի աչքերը. «Աստվածապաշտության խորհրդական հայտնապես մեծ է. ԱՍՏՎԱԾ ՍԱՐՍՆԻ ՄԵԶ ՅԱՅՏՆՎԵՑ, Յոգով արդարացավ, երևաց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսներին, հավատով ընդունվեց աշխարհում ու փառքով հանբարձվեց» (1 Տիմ. 3:16):

Աստծո երեք հիմնական հայտնությունները երեք ոչ մի առաջյալի կամ մարգարեի կողմից չեն դրվել կողք-կողքի որպես անկախ անձնավորություններ. դա հելլենիստական-փիլիսոփայական, ռացիոնալ մտածողություն է: Ոչ թե երեք միաբան անձնավորություններ են, այլ Մեկը՝ երեք հայտնությամբ: Երկնքում Նա Յայրն է, այդ պատճառով մենք աղոթում ենք. «Յայր մեր, որ երկնքում ես»: Երկրի վրա Նա հայտնվեց Որդու մեջ որպես մեր Փրկիչը, ահա թե ինչու փրկության համար անհրաժեշտ է Աստծո Որդու հանդեպ հավատքը: Միայն նա, ով ունի Որդուն, ունի նաև Յորը և հավիտենական կյանք(1 Հովհ.5:12): Եկեղեցում նույն Աստված գործում

է մինչև վերջ Սուրբ Հոգով: Նախ Աստված մեր վերևում էր, հետո՝ մեզ հետ և վերջապես բնակվեց մեր մեջ: Հովհաննես առաքյալն այսպես է ձևակերպում այդ միտքը. «Եվ գիտենք, որ Աստծո Որդին եկավ ու մեզ միտք տվեց, որպեսզի ճշմարիտը ճանաչենք, և ճշմարիտի մեջ ենք, այսինքն՝ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ: Նա է ճշնարիտ Աստվածն ու հավիտեմական կյանքը» (1 Հովհ.5:20):

Դին Կտակարանի մոտ 4000 տարիների ընթացքում չի պատմվում Հոր և Որդու միջև զրոյցի մասին: Այդ ժամանակամիջոցում Նա երեք չասաց. «Իմ սիրելի Որդի, Ես թեզ կուղարկեմ»: Այլ միշտ ասել է, որ Նա Ինքը կգա, ինչպես օրինակ Ես.35:4-6, Ես.40:3 համարներում: Եթե Սաղմ.2:7 համարում գրված է. «Ուն Իմ Որդին Ես, Ես այսօր քեզ ծնայ», դա չի նշանակում, որ Երկնքում Աստծո Որդի կար, հետո Նա իջակ Երկրի վրա: Նոր Կտակարանը մեզ հստակ ասում է, թե ինչպես Եղավ Հիսուսի ծնունդը: Այսպես Աստված հայտնվեց մարդկային մարմնի մեջ: Նա Ինքը մարդ դարձավ: Դա իր աստվածային սիրո անընթանելի, անհասկանալի խորհուրդն է: Որպես Որդի՝ Նա չարչարվեց և մահացավ, բայց որպես Աստված՝ Նա անմահ է: Փրկագնումը կատարվեց Նրա մարմնեղեն մարմնով, որպեսզի մեզ ազատի մահկանացու մարմնից (Եբր. 2:14,15) և մեզ տա հարության երաշխիքը (Կորինթ.15:50-57):

Հիսուս Քրիստոսը մարմին դարձած Խոսքն է, Լոգոսը, Յահվեն, Որը նախ իր անընթանելի հոգևոր անսահմանությունից մտավ հոգևոր մարմնի մեջ, իսկ հետո հայտնվեց տեսանելի մարմնեղեն մարմնի մեջ: Սա զուտ և կատարյալ ճշմարտությունն է: «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստուած էր... և Բանը մարմին Եղավ ու մեր մեջ բնակվեց» (1 Հովհ. 1:1,14): Հիսուսը ոչ միայն նման է Յորդ. Նա մեկ է Նրա հետ: Ինչպես որ Աստված (Ելոհիմ) հայտնվեց որպես Տեր (Յահվե), բայց մնաց նույնը, այնպես էլ Յայրը հայտնվեց Որդու մեջ, բայց մնաց նույնը:

Առաքյալը մեզ անտեղյակ չի թողնում հակաքրիստոսի շարժման ծագման վերաբերյալ և հստակորեն ասում է. «Մեզանից դուրս եկան, բայց մեզ անից չէին» (1 Հովհ.2:19): Այս զարգացումը չի գալիս հուղայականությունից, այլ այն մարդկանց բյուրընթանումից, ովքեր նի ժամանակ միացան Քրիստոսին հավատացողներին, բայց անձամբ չհանդիպեցին Քրիստոսին: Արդեն Քրիստոսից հետո առաջին դարերում ձևավորվեց այս ուղղությունը: Բայց միայն Նիկյան տիեզերաժողովից հետո դարձավ հաստատուն կազմակերպություն: Ցուրաքանչյուր հրեա գիտի առաջին պատվիրանը. «Ես եմ Եհովան, քու Աստուածդ և անծն կատառուածներ չունենաս» (Ելից 20:2,3): Ոչ մի հրեա մեկ Աստծուն մի քանի Աստված չէր դարձնի:

Իհարկե, Սուրբ Գրքում նորից ու նորից հանդիպում ենք Աստծո Երեք ամվանումներին: Այսպես օրինակ՝ կարդում ենք. «Պարզեները զանազան են, բայց Հոգին նույնն է: Շառայություններն էլ զանազան են, բայց Տերը նույնն է: Ներգործություններն էլ զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամեն բան ներգործում է ամենին մեջ» (1 Կորինթ.12:4-6): Մենք այս խոսքերին

ասում ենք «ամեն»: Ոչ մի առաջյալի մտքով չեր անցնի ասել. «Թող Յայր Աստվածը, Որդի Աստվածը, Սուրբ Յոգի Աստվածը ձեզ օրինեն»: «Որդի Աստված» և «Սուրբ Յոգի Աստված» արտահայտությունները ոչ մի անգամ չեն հանդիպում Աստվածաշնչում: Ամեն անգամ հստակորեն ցույց է տրվում ծագումը. Սուրբ Գրքում կարդում ենք «Աստծո Որդի» կամ «Աստծո Յոգի»: Եռակի Աստված իրոք տարօրինակ Աստված կլիներ: Մակերեսորեն դիտողի համար Քրիստոսի և հակաքրիստոսի վարդապետությունները երբեմն զարմանալի նմանություններ ունեն, բայց երբեք չեն համընկնում և ըստ էության կատարելապես տարբեր են: Յակաքրիստոսի քարոզած Քրիստոսն անշուշտ Աստվածաշնչի Քրիստոսը չեն: Անկասկած, կարող է տեսնել միայն նա, ում աչքերն Աստված բացել է (Ղուկ. 10:22):

Յակաքրիստոսի հոգին արդեն սկսել էր գործել սկզբնական քրիստոնեության մեջ: Յովհաննեսն այդ վարդապետության ներկայացուցիչներին անվանում է «սուտ մարգարեներ» և գգուշացնում 13ովի.4:1-3 համարներում. «Սիրելինե՛ր, ամեն հոգու մի՛ հավատացեք, այլ փորձեք հոգիները, թե արդյոք Աստծու՞ց են, որովհետև շատ սուտ մարգարեներ են աշխարհ դուրս եկել: Դրանով Աստծո Յոգին ճանաչե՛ք. ամեն հոգի, որ խոստովանում է Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, Աստծուց է: Եվ ամեն հոգի, որ չի խոստովանում Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, Աստծուց չէ. դա ների հոգին է, որի մասին լսեցիք, թե գալիս է և հիմա արդեն աշխարհում է»:

Սիայն հակաքրիստոսը չէ վարդապետական հարցերում սուտ մարգարե, այլ կան շատ սուտ մարգարեներ և սուտ քրիստոսներ, որոնց դեմ մեզ գգուշացրել է Տերը (Մատթ.24): Բոլոր քարոզիչներն ու ավետարանիչները, որոնք քարոզում են սուտ մարգարեից վերցրած սուտ վարդապետությունները Աստվածության, մկրտության և այլ թեմաների վերաբերյալ, հակառակվում են Աստծո խոսքն. այդպիսով նրանք էլ են համարվում սուտ մարգարեներ և հոգևորապես պատկանում են հակաքրիստոսի ճամբարին:

«Քրիստոս» բառը նշանակում է «Օծյալ», ուրեմն սուտ քրիստոսները սուտ օծյալներ են: Կան մարդիկ, նույնիսկ հրաշքներ գործող մարդիկ, որոնք, չնայած իրենց օծությանը, պաշտպանում են հակաքրիստոսի ավանդական, սուտ ուսմունքները: Ահա թե ինչու գրված է, որ վերջում սուտը այնքան մոտ կլինի ճշմարիտին, որ, եթե հնարավոր լիներ, ընտրյալներն էլ կնողորվեին: Բայց նրանք չեն կարող մոլորվել, որովհետև Աստծո խոսքը Աստծո Յոգով կնքված կլինի նրանց մեջ:

Յիսուսը խոսում է այն մարդկանց մասին, ովքեր ունեն Սուրբ Յոգու պարգևները, բայց, չնայած դրան, սուտ են. «Ոչ թե ամեն ինձ "Տե՛ր, Տե՛ր" ասողն է երկնքի արքայություն մտնելու, այլ նա, ով կատարում է իմ Յոր կամքը, որ երկնքում է: Այն օրը շատերն ինձ կասեն. "Տե՛ր, Տե՛ր", չէ՞ որ քո անունով մարգարեացանք ու քո անունով դևեր հանեցինք, քո անունով շատ հրաշքներ արեցինք": Ես էլ այն ժամանակ նրանց հստակ կասեմ. "Չեզ երբեք չեն ճանաչել. Ինձանից հեռացե՛ք, ո՞վ անօրենություն գործողներ"»

(Մատթ.7:21-23): Ոչ մի օգուտ չունի մեզ ավանդված հավատքի դաշտանը կրկնելը. դրանք պետք է քննվեն խոսքով, որովհետև խոսքի համաձայն է Տերը մեզ դատելու:

Աստծո Յոգին միշտ նույնը կասի նույն բանի վերաբերյալ: Նույն բանը կլինի բոլոր այն սպասավորների մեջ, որոնց Տերն ինքն է հաստատել: Խոսքն այն մասին չէ, որ շուրջերով պետք է կրկնել որևէ դավանանք, այլ ինչպես Պողոսն է ասում 1Կորնթ.12:3 համարում. «... ոչ չի կարող Յիսուսին «Տեր» ասել, եթե ոչ Սուրբ Յոգով»: Որպես Տեր՝ Նա Աստված է, և հենց դրա մասին է խոսքը: Միայն այն ժամանակ, երբ կատարյալ համոզվածությամբ կարող ես ասել «Յիսուսն է Տերը», ստացել ես Յոգով հայտնություն, որ Յահվեն (YHWH) և Յիսուսը նույն Տերն են: Նա, ով չի հավատում սրան, հակաքրիստոսի մոլորության մեջ է, անկախ նրանից, թե որ կրոնական համայնքին է պատկանում:

Եթեևալ համարը մարտահրավեր է նրանց համար, ովքեր ուզում են քննել իրենք իրենց: Նա, ով ունի Քրիստոսի Յոգին, կիավատա հարուցյալ Տիրոջ այս խոսքերին. «Ես եմ Ալֆան ու Օմեգան (սկիզբն ու վերջը),--- ասում է Տերը, նա, որ է, որ էր, և որ գալու է՝ Ամենակալը» (Յայտն.1:8). սա մեր Փրկչի անձնական վկայությունն է, Որը ներկայացնում է որպես Ամենակալ: Ո՞վ է ուրեմն կարծում, որ կան մեկից ավելի Ամենակալներ: Աստված և Նրա հայտնություններից յուրաքանչյուրը եզակի թվով են: Կա միայն մեկ Արարիչ, մեկ Փրկիչ, մեկ Թագավոր, Մեկը, որ պահում է ամեն բան և այլն: Կա միայն մեկ Յայր, մեկ Որդի և մեկ Սուրբ Յոգի: Կա մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն, մեկ փրկություն, մեկ Եկեղեցի և այսպես շարունակ: Աստծուց ելնող ամեն բան իր ողջ բազմազանության մեջ եզակի թվով է:

Այստեղ մենք չենք պաշտպանում «Միայն Յիսուս» Վարդապետությունը: Յիսուսն ինքն իրեն չի ծնել, ոչ էլ իր աղոթքներում խոսել է ինքն իր հետ: Ինչպես միշտ ծշմարտությունը մեջտեղում է: Այս շարադրանքի հիմնական միտքն այն է, որ վերջում աստվածաշնչյան մաքուր և չկեղծված վարդապետությունը պետք է վերականգնվի: Երբ Թագավորության այս հավիտենական Ավետարանը կքարոզվի որպես վկայություն բոլոր ազգերին, կզա վերջը (Մատթ.24:14):

Աստվածաշնչի ամեն վարդապետ և յուրաքանչյուր ընթերցող պետք է ճիշտ, խորը և հիմնավոր համենատություն կատարի: Այն Քրիստոսին, որ մեզ ներկայացնում են հարանվանություններում, պետք է համեմատել Աստվածաշնչում նկարագրված Քրիստոսի հետ: Նույնը վերաբերում է բոլոր հավատացյալների մտքում խարսխված այն համոզնունքին, որ ամեն Քրիստոսին վկայակոչող Աստծուց է:

Համընդիահանուր ընդունված կարծիքի պատճառով շատերի համար դժվար է ճանաչել հակաքրիստոսին, ինչպես իրականում նրան նկարագրում է Սուրբ Գիրքը: Քանի որ ողջ աշխարհում բոլոր ազգերից, կրոններից հավաքված բազմության առջև վկայակոչում է Քրիստոսին, մարդկանց

մեծանանությունը չի կարողանում պատկերացնել, որ հենց այս մարդն է քրիստոսի ամենամեծ թշնամին:

Վերցնենք օրինակ՝ Հռոմի պապի պատմական այցելությունը Հնդկաստան, որտեղ նա իիդուհստների մեջ բազմության առջև հայտարարեց. «Քրիստոսը բոլոր կրոններում է»: Այստեղ մենք պետք է հարց տանք. «Ո՞ր Քրիստոսը: Նա՝, որ Մարիամի գրկում է: Նա՝, որին պատրաստել են ինչ-որ նյութից և սոսնձել խաչի վրա: Նա՝, ում ներկայացնում են ցանկացած նպատակով: Նա՝, որին մարդիկ պատրաստել են խսորից և «Սամկոտուս, սամկոտուս, սամկոտուս» բառերով իբր թե վերածել Քրիստոսի: Նա՝, որի վրա ազդեցություն ունի Մարիամը: Նա՝, ում կողքին բարեխոսների բանակ կա: Այն Քրիստո՞սը, որի համբարձումը խանրում է Մարիամի կարծեցյալ համբարձման դիմաց, որն իբր թե համբարձվել է հոգով և մարմնով: Այն Քրիստո՞սը, որին փոխարինում է «Երկնային քագուհին»:

Պապի եկեղեցու ներկայացրած Քրիստոսը Աստծո Քրիստոսը չէ. դա ըստ անհրաժեշտության հնարված Քրիստոս է: Այդպիսի Քրիստոսին հարմար է դնել, տեղափոխել ամենուրեք, որովհետև միշտ այնպիսին է, ինչպիսին պետք է իրենց տվյալ պահին: Բայց դա այն Քրիստոսը չէ, որ նկարագրված է Աստվածաշնչում, Նա, ում ճանաչում ենք որպես Տեր, Փրկիչ, Թագավոր, Դատավոր, Աստված: Ինչ-որ Քրիստոսի վկայակոչելը ոչ ոքի չի օգնի. հոգիները պետք է քննել, վարդապետությունները՝ համեմատել: Աստվածաշնչի Քրիստոսն այնպիսին չէ, ինչպիսին մենք ենք Նրան պատկերացնում: Նա վեր է ամեն պատկերացումից և նույն է երեկ, այսօր և հավիտյան (Եբր.13:8):

Ինչպես տեսանք բոլոր մեջբերված սուրբգրային համարներից՝ Քրիստոսն Ինքը միշտ վկայակոչել է Աստծո Խոսքը: Ահա թե ինչու պետք է ևս մեկ անգամ շեշտենք, որ անօգուտ է պարզապես խոսքով վկայակոչել Քրիստոսին, եթե դա չի արվում այնպես, ինչպես Սուլը Գիրըն է ասում և պահանջում: Ամեն մարդ ինքը պետք է որոշի, թե ում է ուզում հավատալ և վստահել: Այստեղ կարող ենք միայն խորհուրդ տալ. ճշմարտապես զանազանել հոգևոր բաները, հավատալ միայն Աստծուն և Նրա Խոսքին:

Մենք ապրում ենք շնորհիքի ժամանակի ավարտից առաջ: Աստվածաշնչյան բոլոր վարդապետությունները նորից պետք է դրվեն աշտանակի վրա առանց որևէ զիջման: Տարբեր ժամանակաշրջաններում եղել են արթնության շատ քարոզիչներ, որոնք քարոզել են աստվածաշնչյան մոռացված ճշմարտությունները՝ չնայած հաստատված եկեղեցիների հակառակությանը: Շատերը կորցրին իրենց կյանքն Աստծո Խոսքի պատճառով: Բոլոր ճշմարիտ հավատացյալները կանչված են պայքարելու այն հավատքի համար, որ մեկընդմիշտ ավանդվել է Քրիստոսի սրբերին (Հուդա 3-րդ համար): Մենք գտնվում ենք վերջնական հոգևոր ճակատամարտում: Եթե միայն լինենք Աստծո կողքին, Նա կինհի մեզ հետ մինչև կտեսնենք այն, ինչին հավատացել ենք: Դժոխքի դռները չեն հաղթ Աստծո եկեղեցուն (Մատք.16:18):

Արտի խորքից բոլոր ընթերցողներին մաղթում եմ Աստծո առատ օրինությունները: